

ԿՐԻԵՎԻԿ ԱԼԻՍՅԱՆ

ԲԱՆԱԿԱՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հայութեական

891.39

13387


4-43

Աղասյան, Հ.

Բահմանականութեանը.

10.2.





ՎԱՐՍԵՆԻԿ ԱՐԱՍՅԱՆ

89199  
Ա-43

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԱԿԱՇԵԼՈՒ ՔՅՈՒՆԵՐ

ՀՀՀՀՀՀ  
Ա 26707



ՀԱՅԱՍՏԱՆ

1948

ԾՐԸԿԱՆ

ВАРСЕНИК АГАСЯН  
СТИХИ

(На армянском языке)  
Армгиз, Ереван, 1948

# ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

## Ս Ի Ր Ե Ց Ի

Գոհար աստղեր, երազ շողե՞ր սիրեցի,  
Վարդ արևներ, ժպտում հույսե՞ր սիրեցի,  
Հոգիս վառուն տենչաց գարուն դյութական,  
Ծաղիկ, դեկիյուռ և ջերմ համբուլը կուսական:

Յողիկ ու խոտ եղան ինձ մոտ, սրտակից,  
Կյանքս հյուավեց հուր կայծերից, հեքիաթից,  
Ծով ու ալիք, ամպ ու երկինք սիրեցի,  
Հաւկը ու լուսին, երգչի ուղի՞ն տենչացի:

1914.

# ԳՐԱԴԱՐԱՆ

Իրիկվա միգում դետն է շառաշում,  
Թամին է վուշ-վլուզ ձայնակցում տխուր,  
Ուսիներն ափին դողում են, սգում—  
Եվ քայլում եմ ես չգիտեմ դեպ ո՞ւր...

Լսում եմ հեռվից, որպես զողանջյուն  
Ինձ կանչող մի ձայն—մե՛ղմ գորովալից.  
Նրա մեջ կա մի հարազատ հնչյուն,  
Կարծես թե խոսող իմ հոգուց, սրտից...

Իրիկվա միգում դետն է շառաշում,  
Թամին է վուշ-վլուզ ձայնակցում տխուր,  
Եվ քայլում եմ ես չգիտեմ դեպ ո՞ւր...  
Անորոշ հեռվից մի ձայն է կանչում...

1914



Ինչպես աղբյուրը վճիռ ու կայտառ  
Ունի հմայիչ զմբուխտ կոհակներ,  
Այնպես էլ հոգիս, հոգիս մշտավառ  
Ունի անհատնում, գեղեցիկ հույսեր:

Ինչպես զեփյուռը հեղիկ շշունջով  
Շոյում է նինջը քաղցրաբույր ծաղկանց,  
Այնպես էլ հոգիս անո՞ւ երգերով  
Կօրորի նիրճը՝ վշտացած մարդկանց:

1914.

## ՎԱՐԵՆՔ ԶԱՀԵԲԸ

Անլույս, անթափանց խավարի ծոցից,  
Սնկյա՞նք, անբերկրանք բանտից, աքսորից,  
Խոնա՞վ, սի՞րտ մաշող ու զնդաններից  
Դու՞րս եկեք, եղբայրք,—վառե՞նք չահերը...

Ե՞տ քաշենք մթին քողը դարերի,  
Մրբե՞նք արցումքներ ստրուկ օրերի,  
Վախսկոտ թշնամուն վինենք գերի,  
Չապրե՞նք լծի տակ,—վառե՞նք չահերը...

Աղտոտ, համարձակ կովենք, պայքարենք,  
Գալիք փորձանքից երբե՞ք չփախչենք.  
Լացի հետ՝ ժայտանք, ցալի հետ՝ երգենք,  
Դուրս զանք ասպարեզ.—վառե՞նք չահերը!

Ծանոթ, անծանոթ իրարու փարված,  
Մեր սրտերը սերտ իրարու ձուլված,  
Քայլենք մեր ճամփան ծաղկումքից հյուսված,  
Միրու կրակով—վառե՞նք չահերը...

Վէրջին զա՛րկն է այս, հարվածն է վերջին,  
Ել վիզ չծուենք բռնակալ ցարին,  
Միշտ անխախտ մնանք մեր սուրբ երդումին,  
Հրդեհե՞նք աշխարհ, —վառե՞նք չահերը..:

ՈՂՋՈՒՅՆ ԶԵԶ

Ողջույն ձեզ, երկրիս հպա՛րտ զավակներ,  
Հալալ լինի ձեզ անունը քաշի,  
Որ պայքարում եք օրեր, գիշերներ  
Լույսի դիրքերում՝ կարոտ գգվանքի:

Դուք եք իմ հոգու աշխա՛րհը հստակ,  
Միշտ դուք եք ապրում իմ ծաղիկ սրտում.  
Եվ ես ամեն օր, ամե՛ն հարկի տակ—  
Խեղճին, տանջվողին ձեր դո՞վբն եմ անում:

Քնած թե արթուն, չքնաղ երազում  
Միշտ ձեզ եմ կանչում լուսեղեն հեռում,  
Հազար գունագեղ տաղեր եմ հյուսում,  
Օրհնում ձեր ճամփան՝ լուսով ողողում:

Թե արշալույսին, թե վերջալույսին,  
Աղոթում եմ լուռ ձեր անթիծ սիրույն,  
Սպասում եմ հաղթ ձեր վերադարձին  
Ու ձեր վեհաշուք անուշ ժպտալուն:

Անդրանիկ սիրոյս գարունը քնքույշ  
Չեր հաղթանակի փառքո՛վ պիտ ձոնեմ,  
Գալիք երջանիկ օրե՛րը անուշ—  
Չեր վառ երգերո՛վ պետք է պսակեմ:

ԶԵՄ ԱՅՅԵԼԻ

Չեմ այցելի հս այն գերեզմանին,  
Ուր ոսկու խելառ ճարուատն է Հանգչում.  
Ափսոս շե՛մ ասի հս նրա կյանքին  
Ու ախ շե՛մ քաշի, շե՛մ լինի տրտում:  
Ես շեմ այցելի այն գերեզմանին,  
Ուր որ մարմարյա արձանն է ժպտում,  
Դատարկ անցյալը պատմում աշխարհին  
Ու նախանձ շարժում անցորդի սրտում:  
Օ՛, ոչ երբեք հս շե՛մ այցելի  
Այն շքեղազարդ գերեզմաններին,  
Նրանք ոչ մի ժամ ուշքս շեն իւլի  
Ու շե՛ն կախարդի իմ անմահ հոգին:  
Կերթամ, կգտնեմ հողաթումբը այն,  
Որ ոչ խաչ ոմի, և ոչ անշուք քար,  
Ծունկ կիշնեմ այնտեղ՝ անշշուկ, անձայն,  
Լուռ խավարի հետ կարտասվեմ երկար:  
Ոչ ոք չի լսի հառաջանքը իմ,—  
Ո՞վ պիտ այցելի խեղճի շիրիմին:

1915.

## ՀԱՅՐԵՆԻՔԻՄ

Ա'խ, ե՞րբ պիտ տեսնենք քո գրկում գարում,  
կի ծաղիկներով թարմ ու հմայուն...  
Ա'խ, ե՞րբ պիտի լսենք լացի տեղ ծիծաղ,  
Ոբ ողջը լինի երգ, ու կյանքը՝ խաղաղ:  
Ե՞րբ պիտի ժամանակ քեզ արևն անբիծ,  
Յրմի դարավոր խավարը լույսից.  
Որ քո անաղարտ լազո՞ւր երկնի տակ  
Եցնի զյութական անդորրը հատակ:  
Ե՞րբ պիտ տեսնենք քեզ կրկին լուսազարդ,  
Սրտերը՝ ուրախ, հոգիներն՝ աղա՛տ,  
Գյուղերդ՝ անքանդ, տաճարներդ՝ շեն, •  
Որ նորից հնչի գեղջուկի լելեն:  
Արդյո՞ք, հանդիսադ ցամաքի՞ց պիտ գա,  
Թ'ե անծայրածիր ծովերեն անհուն.  
Քեզ ո՞վ անդրանիկ համբույրը պիտ տա,  
Իմ փառ՛ոք ու պարծանք հայրենի՛ք սիրուն:

1915.

## ԱՐՅՈՒՆՔ

Սեբաստիայից մինչև Կովկաս,  
Մինչև սիրտը Բինգյուլի,  
Եկավ որպես դաժա՞ն երազ՝  
Քարավա՞նը արցունքի:  
Մայր Արաքսը հուզվեց կրկին,  
.Ալիքները խենթացան.  
Գոհարացող ջինջ ափերին  
Ծաղիկ ու խոտ մահացան...  
Տիրեց հսկա Մասիսը ծեր,  
Լուռ արտասվեց ու սգաց.  
Շեն ավաններ դարձան ավեր,  
Ծիծաղը՝ վիշտ, երգը՝ լաց...  
Եկավ որպես դաժան երազ  
Քարավանը արցունքի:  
Սեբաստիայից մինչև Կովկաս,  
Մինչև սիրտը Բինգյուլի:

1915.

## ԵՐԱԳԻ ՊԵՍ

Պարզ գիշերին չքնաղ հովտում առվի մոտ  
Նստած էի լուս, մտորու ու մենակ.  
• Շուրջս հովն էր շշնչում մեղմ ու կարոտ,  
Համբույր տալիս ափերին ջինջ ու հստակ:  
Շողուն աստղեր նուրբ պճրանքով նազենազ  
Լուսնին գրկած՝ սահում էին ու ժպտում.  
Մաղիկ ու սեզ, նոճիները երկնաշաս՝  
Թաղցր սիրո հեքյա՞թն էին ինձ պատմում...  
Եվ ամեն ինչ գեղեցիկ էր, դյութական,  
Հոգին՝ խնդա՞զ, սիրտս՝ անցա՞վ, անթախիծ.  
Չկար ոչ վիշտ, ոչ դառնություն խոլական,  
Ալ սին պատրանք, ոչ տառապանք, ոչ կսկիծ:  
Եվ այն օրից անցան օրիր վարդագույն,  
Ասկնժպիտ վառ գարուններ լուսազարդ,  
Հիմա շորս դիս սուգ ու արցունք է դժգույն,  
Չկա ոչ խինդ, ոչ էլ բերկրանք լուսազարդ:  
Մեր ու ժպիտ, երգ ու ակնարկ մարեցին,  
Տենչ ու թոփշք շոգիացա՛ն մեղկ անշուք,  
Ամպերն ելան աշխարհ՝ լացո՛վ ցողեցին,  
Մեռան կյանքեր՝ երազի պես վաղանցուկ...



Իմ ժակովիրի արցունքից ծնված  
Երիկների մեջ շրջում եմ, սզբում.  
Կանաչ լումբերից, շիրիմներից թաց,  
Համբույր եմ բաղում ու լուս հեկեկում...  
Իմ աղեկտուր գտնեմ Հեծելլտանքից  
Լոռում է կանչը սիրուն սոխակի.  
Աստղերը բոլոր թափվում են երկնից,  
Հանգչում տատասկու ճամփին զրկանքի...  
Բողբոջ կյանքերի արյունավ բարձած  
Քարագաններն են դալիս ու գնում.  
Ծաղկահյուս սիրուն ցավից զոսացած  
Ժողովրդիս վիշտն է դառնագին ողբում:

1915.

Գ Ա Դ Յ Ը

Շարան-շարան եկան կրկին,  
Կորաքամակ, դողի ի դող.

Միծաղ չկա' նրանց դեմքին,—  
Ոչ էլ ժպիտ երկնաշող...

Զահել ու ծեր տխուր տրտում,  
Արտասվում են լուռ-լոփին,

Նրանց շուրթիր միշտ են պատմում—  
Անցվոր մարդին, աշխարհին...

Հարսը կորցրած սերն է փնտրում,  
Մայրը՝ անուշ զավակին.

Արևներն են անխոս մարում,  
Հեռուներում անմեղին...

Սիրտ է մաշում, Հոգի տանջում  
Մյուս սկ դադթը արյունոտ.

Եվ հիմա իս չեմ ճանաշում—  
Ոչ սիրո հրդ, ոչ կարոտ...

195.

Եղանակ ունի բան զնանուն  
...ունին առ առ առ առ առ  
զնանուն առ առ առ առ առ  
զնանուն առ առ առ առ առ  
...ունին առ առ առ առ առ առ  
զնանուն առ առ առ առ առ

ՏԱՌԱՊՅԱԼ ՔՈՒՅԵԲԵՐԻՄ

Իմ տառապյալ անտում քույրեր,  
 Այդ մութ ճամփով ո՞ւր կերթաք,  
 Անհարազաւ ու անընկեր  
 Հողմերի հետ ո՞ւր կերթաք:  
 Ո՞վ է տանում, ո՞վ է կանչում  
 Չեզ դեպ գիրկն արյունի,  
 Չեր կույս հոգին ո՞վ է ծեծում  
 Դաժան մուրճով գրկանքի:  
 Չեր ցափերից քար ու քարափ  
 Սև են հագել, կոգան.  
 Կյանքն էլ շունի՝ ծաղկում մի ավ, —  
 Ողջ սև հագել՝ կոգան:  
 Ի՞նչ համբույրով ես խինդ ցողեմ  
 Չեր շուրթերին պապակած.  
 Ի՞նչ խոսքերով գրի առնեմ  
 Տառապանքը ձեր կրած:  
 Ո՞վ է լսում, ո՞վ է տեսնում —  
 Աշխարհը՝ խո՞ւլ, մարդիկ՝ կո՞ւյր...  
 Միայն ես եմ ձեզ հետ շրջում,  
 Չեզ հետ ապում ծով մոմուռ...  
 Մեռնիմ ձեզի, դարդու քույրեր,  
 Հողմերի հետ ո՞ւր կերթաք.  
 Իմ հալածված, զարկված հավեր, —  
 Միրու գրկած՝ ո՞ւր կերթաք:

\* \* \*

Կգա մի օր,  
Կիշնի անդորրի  
Ամեն ուր.

Ակնարկի պես,  
Երազի պես,  
Մունջ ու լուռ...

Ու ամեն ինչ,  
Կթվա շինջ  
Ու հստակ.

Նոր հույսերով,  
Նոր իղձերով  
Անհատակ...

1915.

## ԱՅՍ ՕՐԵՐՈՒՄ

Մահամբույր այս օրերում  
Չեմ երգի սեր ու կարու.

Թեկուզ կյանքս է անցնում տրտում,  
Օրերս սև ու թխաղու...

Շքեղություն, գանձ ու ռոսկի  
Ինձ չե՞ն գերում տակավին.

Իմ տառապյալ ժողովրդի  
Հավն է տանջում իմ ճողին:

Շուրջս արցունք, միշտ, գառնություն,  
Սիրոս անուշ շի խնդա.

Չեմ երազի երջանկություն,  
Մինչ արեւը շմառա...

1915.

ՀՈՎԵՐԻՆ

Անո՞ւշ հովեր,  
Քնքո՞ւշ հովեր,  
Տարեք ինձնից վառ բարև  
Արյունոտված  
Հեռվում ընկած,  
Մես սրտերին անարի:  
Համբույր տարեք,  
Բուրմո՞ւմք տարեք,  
Տարեք քաղցր ժպի՛տն իմ.  
Գուրգուրեցեք,  
Փայփայեցեք  
Մենոնդ հոգին անշիրիս:  
Իմ շուրջերով  
Պատմեք նրանց  
Խորոնկ խորհուրդը կյանքի,  
Թող շափսուան,  
Թէ զո՞ւր մեռան՝  
Երազ գրկում սուրբ պարտքի:  
Ասեք նրանց,  
Դո՞ւք եք անանց  
Սիրուն գո՞վքը աշուղի.  
Զերն է պայծառ  
Աշխա՞րհն անծայր՝  
Ել ծիծաղի, և լացի:

17



Հոգոս թեր  
Նաղան հովեր,  
Տարեք պարուն հույսերն իմ.  
Օրոր ասեք,  
Գուրգուրեցեք  
Մեռնող հոգին անշիրիմ:

1915.

Ա. Ք Ս Ռ Ը

(Տանիքակայ մտավորականների հիշատակին)

Ոտներին շղթա, ձեռներին շղթա—  
Տանում են նրանց անհայտ տանջանքի...  
Սյն ո՞ր աստվածը նրանց պիտ գթա—  
Կույր ճշմարտությա՞ն, թէ՞ մեռած խղճի...  
Հիմա մենք արդեն չունինք աղաշանք,  
Ել չունինք աղոթք փրկության համար,  
Երկինքն է վկա, չունինք հառաշանք,  
Ոչ լաց ու տրտունջ, ոչ աղերս հիմար...  
Մենք պիտի կովենք մինչ շոմը վերջին,  
Մինչև որ հաղթի լույսը խափարին,  
Պիտ մարտի կոչենք թուլլին, հզորին,  
Մինչեւ որ հասնենք մեր տենչած կյանքին...  
Երկրի բնդերքից շաշ ու շառաշի,  
Կուլ դղրդյո՞ւնն է հանում ականջիս:

## ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՅՆԸ

Կանշում է կրկին լուսեղին հեռվից  
 Հաղթական ձայնը սուրբ հայրենիքի,  
 — Ելեք, իմ որդիք, թանձր խավարից,  
 Հերիք տառապեք գրկում տանջանքի:  
 Օտար հողու զուր, օտար արևներ  
 Զեր հոգուն երբեք գգվանք չե՞ն բերի,  
 Իզուր եք մաշում օտար ճամփաներ,  
 Օտար երկնի տակ հանգիստ չի'ք գտնի:  
 Ե'տ դարձեք կրկին երկիրը ձեր հին,  
 Ուր ամեն մի թուփ կարստել է ձեզ,  
 Այստեղ ձեր սրառում կծաղկի գարուն.  
 Դեռ գարուն կգա, քնքո՞ւզ սիրո պես:  
 Նորից կհնչի. լելեն գեղջովկի,  
 Խոփի ու մանգաղի շառա՛լը հզոր.  
 Ել ամեն շուրթից խինդ ու բերկրանքի  
 Խոսքը կլսվի, խո՞սքը լուսավոր:  
 Կանշում է անվերջ, կանշում անդադար  
 Հաղթական ձայնը սուրբ հայրենիքի.  
 Ել բույր ու բուրմունք, դաշտ ու լեռ, անտառ,  
 Հազար դյութանքով կանշում են կյանքի:

1916.

ԵԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Գնա'նք, ընկեր իմ, գնանք այն շքնաղ ափերը հստակ,  
Ուր նորոգ կյանքի արևն է ծագում խաղաղ երկնի տակ:  
Ուր գեղածիծաղ ծաղիկ, բուցր ու սեղ լանջերից բեհեղ  
Քնքոյշ, հմայիշ, կարոտ շուրթերով՝ միշտ կանչում են մնզ:  
Գնա'նք, ընկեր իմ, այնտեղ ուր ուր բար մտերիմ ու  
հողտ,

Փարվում են իրար համբուրվում, գգվում ու երգում, աղտամ:  
Ուր ամեն թփից, ամեն սաղարթից սոխակն է խոսում,  
ձամֆորդի սրտում, անաղարտ սիրով գարունը Հյուսում:  
Գնա՞նք, ընկեր իմ, փնտրենք ու դանենք աշխարհն այն շքեղ,  
Ուր չկա կոկիծ, չկա հոգետանշ, զրկա՞նքն այս ա՞ել...  
Գնա՞նք, կառուցենք նոր-նոր պալատներ, նոր շենքեր հույսի,  
Վառենք փրկարար կանթեղը անբիծ հար անմար լույսի:  
Փշրենք, ջախչախենք լուծը բոնության, շղթան դարերի,  
Քանդենք, ավերենք բանտերը դաժան՝ ծնունդ խավարի...  
Ել ոչ որ, ոչ ոք չի կարող փակել մեր լուսե ճամփան,  
Թե կառենք հողմից, կթռչենք հոռո՞մ, եկող ապագան:  
Երթանք ամենուր ու Հույս ներշնչենք խեղճ զրկվածներին  
Ու ասենք նրանց—Ել վիզ մի ծռեք բռնակախներին:  
Դե՛ք, գնանք, ընկեր, գնանք այն շքնաղ ափերը հստակ,  
Ուր նորով կյանքի արևն է ծաղում խաղա՞լ երկնի տակ:

ԴԵՌ ՊԵՏՔ Է ԼԻՆԵ

1

Լսվում է կրկին ոև քարավանի  
Ղողա՞նջը տիսո՞ւր, տիսո՞ւր ու ցավուս.  
Ամեն ուր անվերջ դարդ ու զուզումի  
Ծո՞վն է աղմկում՝ խե՞նթ ու փոթորկոս:  
Քաջ ու պայքարող որդիքն իմ աղգի  
Խեղճ ու տարագիր աղքա՞տ են հիմա.  
Թողած հարազատ օջախն հալրենի, —  
Մերկ ու սովալլուկ ընկել են ճամփա:

2

Սակայն փո՞ւթ չէ մեզ, այդ ահեղազոս  
Մրրիկն էլ կանցնի շատերի նման.  
Մոլի բռնության շղթա՞ն դարավոր  
Մեր կուռ հարվածից՝ կմեռնի անձայն:  
Մենք մուրացիկ չե՞նք, ոչ էլ կրենք,  
Կովով ծնվել ենք, կավո՞վ կմեռնենք,  
Մինչեւ որ ծագի ժամը փրկության,  
Ծագի նորագարդ այզը խնդության:  
Քանի կան, կապրեն կոթողները հին,  
Սյուները կանգուն, կանգո՞ւն հավատի.  
Նորից կփփթի թառամ վարդենին  
Հայո՞ց աշխարհի բազմատանշ հողին:  
Ամեն հարկի տակ, ամենքի սրտում

Կհնշի նորից մեղեղին կյանքի.  
Ոչ ոք չի' ապրի լիւատ ու տրտում,  
Ամենքն էլ կարքեն գինով վայելքի:  
Կբացվի մեր դեմ նո՞ր ապրումների  
Ռուղին լուսավոր, երկիրը շքնաղ.  
Ոչ ոք մեր հոգուն կսկիծ չի' բերի՝  
Կիշնի զյութական անդո՞րրը խաղաղ:  
Թող որբան կուզի սև քարավանի  
Դողանջը լսվի տխո՞ւր, վշտալի՝  
Վերջին ցավե՞րգը՝ արնոտ օրերի, —  
Գիտցե՞ք մեծ օրը դեռ պիտի լինի:

1916.



Ամեն մի զրկված տեղ ունի ինձ մոտ,  
 իմ լույս հարկի տակ՝ ունի տաք անկյուն;  
 Փոթորկից ծեծված, հիվանդ ու դժգույն  
 Ամեն մի ճամփորդ՝ տեղ ունի ինձ մոտ:  
 Իմ դուռը բաց է աշխարհի առջև,  
 Խեղճի՛, աղքատի քույրն եմ գիտատ,  
 Նրանք են հոգուս միակ հարազատ—  
 Բաց է իմ դուռը աշխարհի առջև:  
 Ճավից տառապող սրտերը հյուծված  
 Կսեղմեմ կրծքիս ու կասեմ օրոր.  
 Զերմ համբույրներով կբերեմ անդորր—  
 Ճավից տառապող սրտերին հյուծված:  
 Ժատով ու սիրով, ծաղիկ հույսերով  
 Կամոքեմ խորունկ վերքերը բացված.  
 Նորից ու նորից կյանք կտամ նրանց—  
 Ժատով ու սիրով, ծաղիկ հույսերով:  
 Ամեն մի զարկված տեղ ունի ինձ մոտ,  
 Իմ լույս հարկի տակ՝ ունի տաք անկյուն,  
 Փոթորկից ծեծված, հիվանդ ու դժգույն  
 Ամեն մի ճամփորդ՝ տեղ ունի ինձ մոտ:



Ծաղիկ օրեր,  
Վա՛րդ օրեր,—  
Անցնում են լուս ու տիսնոր.

Զահել օրեր,  
Խե՛նթեօրեր,—  
Անցնում են պաշու ու անբռնյար...

Սրտեր անթե,  
Անարի  
Փշովո՞մ են վաղ ու վաղ.

Կյանքեր անշող,  
Գողեգո՞ղ,—  
Մնում անսե՞ր, անծիծաղ...

Հազար ու մի  
Մոմուի  
Խոց ու բոցեր եմ տեսնում,

Հազար փշոտ  
Ու քարոտ  
Ճամփաներո՞ղ եմ անցնում...

Ամենքի հետ  
Ու լի վիշտ  
Թափառո՞մ Փեմ ծարավի.

Բանաստե՞ղծ եմ  
Դալկաղեմ,—  
Մեկնաբաշը աշխարհի:



Հեզահամբույր ծաղիկների թերթերում,  
Հովք ցողի քաղցր նիրճն է օրորում.  
Մեկն էլ ասես գեղատեսիլ երազում,  
Քնքույշ սիրույս ոսկի արտն է ակոսում... .

Ա՛խ, չգիտեմ, ես չգիտեմ ո՞վ է այդ,  
Ո՞վ է արդյոք այդ սերմնացանը անհայտ,  
Ինչ է ցանում, արդյոք բարի՞ք խնդության,  
Թհ՝ ցավ ու վիշտ հավետ անմեռ տիսրության... .

...Ինչ էլ լինի հովք ցողին կօրորի,  
Ծաղկանց բույրով հոգուս անդորր կբերի.  
Մտքիս ուղին ցոմի՝ սկիզբ ու վախճան,  
Լույս ու խավար կոփիլ կտան ու կերթան... .

Զկա կյանքում անհնարինն ինձ համար,  
Իշնին աշխարհ, երկինք, աստղեր մշտավառ.  
Եվ ես անվերջ-անվերջ կերթամ ու կերթամ,  
Ուր էլ լինի, անուշ կերպեմ ու կերթամ... .

## ՄԱՅԻՍԻ ՄԵԿ

Մաղկեցեք կրկին, խոպացած լեռներ  
արնոտ աշխարհի,  
Մաղկեցեք կրկին, գարունն է գալիս  
ժաման հուզերի...  
Ստրուկ օրերի տանջված հոգիներ՝  
զարթնեցեք նորից,  
Հարություն առեք խոնավ ու լացող  
գերեզմաններից...  
Այս օրը՝ օ՞րն է դարերում տենչած  
ձեր երազների,  
Սրբազն ուխտը՝ հավասար կյանքի  
ազատ երգերի...  
Ամենքի շուրթից լսվում է երգը  
հզոր, մարտական,  
Միակ դյութական սփոփանքը մեր  
անվերջ ինդության...  
Հիմա էլ չկա՛ սև բռնությունը  
Դաժան տերերի.  
Ոչ մի արձագանք չի՛ մարի իզուր,  
չի՛ մնա թերի...  
Վառ ու սիրաթոր արեն է շողում  
Ամենքի սրտում.  
Կոկիծ ու թափիծ քրքիջով խելառ՝  
Թաղվում են մթնում...  
Էլ ետ չե՛ն դառնա կարավանները  
հալածողների,

Փառքից կուրացած, չեն նյութվի  
դավեր ջահել կյանքերին...  
Մաղկեցեր կրկին, խոպացած լեռներ  
արնոտ քշխարհի,  
Գարունն է գալիս, զքնաղ գարունը  
թշվառ աղգերի...  
Հարություն առեք տանջված հոգիներ  
ստրուկ օրերի,  
Այս օրը—օրն է դարերում տենչած  
ձեր երազների

1917



Մեռնիմ Հեռավոր այն Հողաթումբին,  
նոր Յանդշոմ է լուռ՝ Հերոսի սուրբ դին:  
Էլ Հերիք ողբաս, երկիր սրբազան,  
Վաղ թե ուշ կանցնեն Հողմերը դաժան...  
Սթափիլր, աշխարհ, մի՛ ողբա, աստված:  
Էլ Հերիք լաս գու, երկի՛ր տառապած:  
Վաղ թե ուշ կանցնեն այս օրերը ոհ,  
Հեռու Հյուսիսից կժպատա արե,  
Ամեն մութ սրտից կլսվի ծիծաղ,  
Ամեն պաղ շուրթից՝ անուշ երգ ու տաղ:  
Կդա երփներանդ գարդ' մը ծաղկոն,  
Քովմոնիք կցողի մեր տանչված Հոգոն:  
Քաղցր դողանջով դանդերը կյանքի  
Կլանչեն մեզ նո՛ր, մի նոր բերկրանքի:

1917.

\* \* \*

Ես դեռ նոր եմ աշխարհ գալիս,  
Նոր պիտ երգեմ խինդ ու սեր.  
Սիրտ իմ, զուր ես անվերջ լալիս,—  
Մեղմում հույզեր ու լույսեր:

Հենց այս գարնան նոր պիտ ցանեմ  
Ծաղիկները պարտեզիս.  
Անհոգ ժպտով նոր պիտ շրջեմ  
Նոր ափե՞րը նոր կյանքիս:

Սիրտ իմ, զուր ես անվերջ լալիս,  
Մեղմում հույզեր ու հույսեր.  
Ես դեռ նոր եմ աշխարհ գալիս,—  
Նո՞ր պիտ երգեմ խինդ ու սեր:

1917.

\*\*\*

Հոգուս պարտեղում արև է ժամում,  
Սպավոր նոճին չի լալիս տրտում:

Մաղկունքն էլ նազան հովերի դրկում  
Կյանքիս գարո՞ւնն են քնքշորին երգում:

Աստղերը հոգուս լազուր կամարում  
Անվիշտ օրերի լուսերն են վառում.

Սիրոս է խնդում հավերժի ճամփին,  
Ուր գեղածիծաղ շողում է արիխն:

Թող ոչ ոք քեզնից ու լուր չբերի,  
Հոգուս անդորրը՝ ցավով չօրորի...

Տիուր ու տանջող ժամերս վամրած—  
Չոնի՞ն վերադարձ.... չոնի՞ն վերադարձ....

## ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵԲԻՑ

Մե քարավանը արյուն արցունքի,  
Քաղվեց հողմածեծ գորշ անապատում.  
Նորից բացվեցին ծաղկունքը կյանքի՝  
Ծիածան կապվեց երկնի կապույտում:  
Գարունը զուգվեց նորահարսի պես  
Ու զիրկը բացեց ծառ ու ծաղկունքին.  
Հավքերը եկան պաղերով պես-պես,  
Եվ ինձ ձայն տվին մի անուշագին:  
—Հեյ զու երգասած անուշի'կ քույրիկ,  
Քո չերմ փայփայած գարունն է եկել.  
Հայրենի հողմում էլ չկա մրբիկ,—  
Հանդ ու անդաստան ծաղիկ են հագել:  
Ես քաշիր թախմուտ քողը աշքերիդ,  
Յած բեր վշտի բեռն ուսերիցը քո,  
Բող վարդեր փթթեն գունատ այտերիդ:  
Ագա՛տ է հիմա՝ հայրենիքը քո:  
Եվ իմ վիալական լիռների կրծքին  
Արեք փոեց վրանն իր կարմիր.  
Թև առավ նորից իմ թափառ հոգին  
Ու վեր սլացավ՝ սիրով անբասիր:  
Եվ ես ժպտադեմ քնարս առա,  
Հյուսեցի երգեր սիրահուզդ ու վառ.  
Քանդի արյունոտ իմ հողի վրա—  
Արեն է փոել՝ շողերը սլայծառ:

## Է. ՄԹՐԻԿ ԶԿԱ

էլ մըրիկ չկա, ու ո ո ո ո ո ո ո ո ո  
ջով հով է հիմար: Յ ո Յ  
Քարավանն ամպի՞ Ն ո Յ Ո Յ  
Բնկել է ճամփի: Յ ո Յ Ո Յ  
Արև նորից  
Ողջունում է ինձ. Յ ո Յ Ո Յ Ո Յ  
Ոսկի շաղ տալով,  
Անուշ ժակտալով,  
Ծիծա՛ղ է փռում  
Հոգուս աշխարհում:  
Միրո ու կյանքի,  
Մի նոր բերկրանքի  
Մեղեդին իմ մեջ  
Հնչո՞ւմ է անվերջ:  
Ու վառվում եմ ես.  
Հուր հնոցի պես...  
Քարավա՛նն ամպի՞  
Բնկել է ճամփի: Յ ո Յ Ո Յ  
էլ մըրիկ չկա,  
Ջով հով է հիմար:

1920.

Հ Ա Գ Ի Ս

Տառապանքից հյուծված հոգիս  
Երդ է ձոնում աստղերին,  
Երդ է ձոնում երազ կյանքիս  
Միրահամբուլը շողերին...

Հիվանդ սիրտս կրկին փթթում,  
Ողջունում է արևին,  
Ծաղիկներս անուշ ժայտում,  
Բույր են տալիս աշխարհին...

Չքանում են, մեռնում անձայն,  
Աև հոգերս հին ու հին,  
Նոր ապրումի ու նոր գարնան  
Հույսն է ժայտում իմ ճամփին...

Ու էլ հոգիս չի տառապում,  
Երդ է ձոնում աստղերին.  
Երդ է ձոնում իմ անտրտում,  
Կանաչ կյանքի շողերին...

1920.

Ա Ե Ն Ք

Մենք անապատի ավագն ենք այրող,  
Թաթա՛լն ենք վարար՝ ալիքներ հուզող.  
Կարավանների զողանջներն ենք մենք,  
Որ ամեն սրուսմ թողնում ենք մի երգ...

Մենք կրակ ենք մի, Հրդե՛ց ենք լափող,  
Որուս ենք հուժկու՝ երկիրներ ցնցող.  
Զիգուգին տվող բոցն ենք կայծակի,  
Ակոսում ենք մութ ափե՛րը կյանքի...

Մենք հաղթահարող ուժն ենք տարերքի,  
Կախարդա՞նքը լին, արծիլի բարձունքի.  
Եկ ո՛չ մի աշխարհ, և ոչ մի ճամփա  
Մեր աշերի դեմ անտես չի' մնա...

Մենք ենք, որ հիմա բերում ենք ժպիտ,  
Փռում ենք ծիծաղ զեմքերին վտիտ  
Ու հողմահալած շարքերը մարդկանց  
Կանչում ենք նորից ապրելու անլաց:

Մենք կրակ ենք մի, Հրդե՛ց ենք լափող,  
Թաթա՛լն ենք վարար՝ ալիքներ հուզող.  
Զիգուգին տվող բոցն ենք կայծակի,  
Ակոսում ենք մութ ափե՛րը կյանքի...

ԹՇՎԱԾՆ ԵՐԵԿՎԱ.

Մութ նկուղներում,  
Հյուղերում այն թաց.  
Խոլ ցավի գրկում,  
Կարիքից կծկված,  
Բշկա՞ռն երեկվա՞  
Դալուկ ու հյուծված...  
Կանգնե՛լ է ահա,  
Արևի դիմաց:  
Աչքերը նրա  
Ժպտո՞վ են լցված...  
Գուք չե՞ք ճանաշի,  
Երբ նայեք նրան.  
Կարծես էլ այն չլ',—  
Փոխիվա՞ծ է այնքան...  
Աշնան հողմահար  
Թերեկի նման,—  
Էլ նա չե՞ դողում  
Հարուատի դուան.  
Էլ չլ' աղերսում  
Հոր հացի համար:

Դարձել է մի կայծ,  
դարբնոցում կյանքի.  
Օրե՛րը անցած...  
թաղել է արդեն,—  
Երթո՛վ մահերգի.  
Էլ չկա՞ն հիմի...  
Էլ չե՛ք ճանաշի,  
երբ նայե՛ք նրան,  
Կարծես էլ այն չի',—  
փոխվա՞ծ է այնքան...  
Փոխվա՞ծ է այնքան...  
1925.

## ՀԵՌՈՒ-ՄՈՏԻԿ ԻՄ ՔՈՒՅՑԲԵՐ

Մաբարի Տ-ին

Այսօր

բոսոր

մեր կյանքի  
ջաշն է լաւովում ամենուր.

մոտ ու

հեռու

ամենքի  
Սիրտն է թնդում անմրմուռ

Հաղթել,

Հասել

ենք արդեն  
դարերի մեր տենչածին, —

Մեր ալ

ու լա՛լ

գարունին,  
Մեր արկին հրածին:

ել մենք

շունե՞նք

փակ լեզու,

Կապած աշքեր միադնած.

անծայր

աշխարհ

մեր առջև՝

Փոմզ ծաղիկ է նոր ծլած:

— Եկեղ,  
իմ հեղ  
ու հյուծված,  
Տանշված քույրեր ընշաղութիւն,  
Հանքից,  
Հյուղից  
մութ ու թաց,  
Գրկենք իրար անարցունք:  
Հաղթել,  
Հասել  
հնք արդեն  
մեր դարերի տենչածին,—  
Մեր ալ  
ու լալ  
դարսմին,  
Մեր արևին հրածին:

1925.

ԹՐՔՈՒՀՀԻ ՔՈՒՅՔԵՐ

Հարեմում փակված քույրեր իմ դալուկ,  
Դալիս եմ ձեղ մոտ՝ լի ժախտ ու երգ.

Ուզում եմ վանել ձեր վիշտը խորունկ,  
Ուզում եմ վառել ձեր սրտերը մեղկ:

Աղատ ու անկախ այս կարմիր օրին  
Չլինեք գերի քող ու բոռնցքի.

Զեր շուշանակերտ փակված շուրթերին  
Թող շողա ժպիտն անկապանք կյանքի:

Զեր այդքան տարվա տառապա՛նքը խոր  
Թող որ ձեղ թվա վայրկյանի մի խաղ,  
Ինչի ձեր հոգուն մի քնքո՛ւշ անդորր,  
Մի անուշ արբա՛նք, երա՛զ մի խաղաղ:

Զեր այդքան դյութիշ աշքերում գիշեր  
Թող էլ մինի՛ արցոնքի մի շիթ,  
Գլինե՛ն տանջող սև ու դառն հուշեր,  
Որ շթառամե՛ք, մինեք վտիտ:

Աղատ ու անկախ այս կարմիր օրին

Չլինեք գերի քող ու բոռնցքի,  
Զեր շուշանակերտ փակված շուրթերին  
Ծողա ժպիշտը անկապանք կյանքի:

## ՍՊԱՆԱՑԻ ՄԱՅՈՒԹԻՒՆ

Զեր այդ վեհիմաստ խոր տառապանքը  
Մենք էլ ենք զգում ու ապրում ձեզ հետ,  
Զէ՛ որ այն արնոտ օրերին դաժան  
Զեզ նման մենք էլ կրել ենք զրկանք...  
Հարլամձների տակ մոլի բռնության  
Արցունք ենք թափել, տոկացել այնքան...  
Լսել ենք տխուր, սրտամաշ մահերդ,  
Եղթաների խուզ զնդո՞ցն ենք լսել.  
Բանու ու կախաղան ենք տեսել որբոն,  
Ե՞լ հալածել են ձեզ նման մեզ էլ...

...Ու տառապանքով պայքարել ենք մենք,  
Մինչ Հոկտեմբերն իր արևն է վառել.  
Յավից գոսացած սրտերում բեկ-բեկ.  
Գարունն իր ոսկի ծաղկումքն է փոկւ...  
Ել երկիրը մեր դարձել է դրախտ,  
Կյանքը երջանիկ ու լուսակարկած,  
Երեկվա դալուկ դեմքերին վճառ  
Արեն է ժպտում, շողերով կակտւ...

Երեկվա արնոտ մեր հողի վրա  
Հասուն մրգերի այդիներ առատ,  
Այն սարսափահար ճամփեքի վրա,—  
Հովին է սլսվում անուշ ու մարմանդ.,.  
Հովի սրինգն է քաղցր կարկաչում,  
Հանդ ու արտից, լանջերից հեռու,  
Արծաթաշող առան մեղմ խոխոզում,—  
Մանուկներն ափին—դրկում իրարու...

Թարձբանում են նոր գիգանտները մեր,  
Ակնթարթն հազար կյանքեր է երկնում,  
Մարմար սյումերով որքան պալատներ,  
Արքան քաղաքներ կան մեր նոր երկրում...  
Աշխատանքը ոնց փրփրագեղ մի ծով  
Իր գիրկն է բացել մեր աղջիկներին.  
Թև-թիկոնք առած երկրի վերելքով,—  
Ժպիտն է փթթել նրանց շուրթերին...

Այսպե՞ս է հիմա մեր երկիրը նոր  
Բուրաստաններով, շողերով լիցուն.  
Հաղթ բաղեների շարքերով հզոր—  
Խնդում դեմքներով, սրտերով ցնծուն...  
Ել ո՞չ մէ հեղեղ մեղ մոտ չի քանդի  
Պատնեշները մեր, ամուր ու կանգուն.  
Առիվ շենք ուզում... Բայց պատրաստ  
մարտի  
Բանակներ ոմենք անպարտ ու արթուն...

Դե՛մ արփացեք, դուք էլ մեղ նման,  
Օ՛սպանացի մայրեր տառապած.  
Թև-թիկոնք տվեք ձեր զավակներին,  
Թող փշրեն շղթան բռնության դաժան...  
Վաղ-ուշ մեր երկրի արևն ալ-վարդ  
Պիտ շողա երկրում ձեր արյունոտ ու մութ.  
Մեր ազատաբեր Հոկտեմբերը վառ  
Պիտ իր գի՛րկն առնի ձեր աշխարհը ցուրտ...

# ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

## ԱՆԻ

Դիւ հիշո՞ւմ եմ քեզ դալուկ աշունքին,  
Մըրիկներ տեսած քո լեռնաստանում,  
Հանց որդեկորուց մայր մի տիրագին,  
Հարատանց թախի՞ծն՝ աշքերիդ ծովում:

Հիշն, հնամենի վանքե՞րդ եմ հիշում  
Թաղված դարերի կապո՞ւտ մշուշում,  
Ուր ամե՞ն մի քար հազար պատմություն,  
Հազար վիշտ ունի, հազա՞ր տրամություն...

Դեռ չե՞մ մոռացել, ու չե՞մ մոռանա  
Գետը Ախուրյան՝ մրմո՞ւմշը նրա.—  
Արցունքդ խառնած պղտոր զբերին  
Հալարվում էր լո՞ւտ, լո՞ւտ ու տիրագին:

Դայում էի քեզ, ու աշքերիս դեմ  
Բարձրանում էին խմ խրոխտաղեմ  
Պաղերը խիզա՞խ ու գյուցազնական,  
Եվ թե՛ էր առնում հոգիս կոսական:

Անցել են քանի՞, քանի՞ տարիներ,  
Քանի՞ ծաղկավառ քնքո՞ւշ գարուններ...  
Ուկեվարս ու մեղկ աշուննե՞ր քանի, —  
Դիւ հիշում եմ քեզ, օ՛, մայր իմ Անի:

ՃԱԽԱՐԱԿ

Էլ մի՛ մանիր դու ճախարակ,  
Սև ու սպիտակ մալանչներ,  
Մեքենան է մեր հարկի տակ  
Գոռ աղմկում օր-գիշեր:

Էլ շե՛նք ուզում լսել բնավ  
Նվազ ձայնդ լալագին,  
Քո դարն հին էր՝ հինը մեռավ,  
Նո՞րն է գերել մեր հոգին:  
Հազա՞ր-հազա՞ր որտերի զարկ,  
Եռանդ ունի մեքենան,  
Հզոր թեռվ անիւնների  
Ճախրում է նա հաղթական:

Գեղջուկ տատին աշքերն հառած,  
Քար է կտրել զարմանքից.  
Զի հասկանում ինչ կատարինց,—  
Ծովի՞ց արդյոք, հեքիաթի՞ց:

Էլ մի՛ շարժիր թեղ ժանգոտ,  
Հնացել ես, ճախարակ,  
Մեր օրերում այս արկոտ՝  
Քեզ կարոտող էլ շկա:

Էլ մի՛ մանիր դու, ճախարակ,  
Սև ու սպիտակ մալանչներ,  
Մեքենան է մեր հարկի տակ  
Գոռ աղմկում օր-գիշեր:

## ԳՅՈՒՂՅՈՒՄ

Անուշ ծեզին,—  
ուր քնքշագին  
Յո'ղն էր դողում  
կանաչներում...  
Ծաղիկ-թիթեռ,  
քնից զարթնել  
Ժպտում էին  
զինջ երկնքին.  
Ու լեռներին  
հրդեհագույն...  
Աղբյուր, առվակ,  
ամեն պուրակ,  
Ամեն մի քար,—  
թուփ մի դաւար...  
Ամեն մի շիթ,  
ցողուն լի խինդ,  
Թրթիռ ու հուզզ,—  
սրտե՞ր լի հույս...  
Փարվել էին  
կաքմիր լույսին,  
Անուշ ծեզին:  
Զընգո'մ էր,

զնդո՞մ էր հար  
Երկը կյանքի,—  
քաղցր ե՞րգը

Աշխատանքի...  
1925.

## ԴԱՅԱԳԱԾԻ ԱՊՀԻԿ

Դազգահին հակված,  
Ուկեծոմ աղջիկ.  
Դարձել ես բացված  
Դարոմքված ծաղիկ:  
Մաղկի պես գույն-գույն  
Զթեր ես գործում.  
Արեն է ալ գույն  
Դեմքիդ ծիծաղում:  
Մատներդ են պարում  
Մաքոքների հետ.  
Եփենան շաշում,  
Զբաւցո'մ քեզ հետ  
Եշքերդ վառման  
Քորաներ երկու  
Դյութիլ են այնքան—  
Դյութիլ ու սիրուն  
Բւ կապույտ հաղած  
Այն բանվոր տղան  
Ալքը քեզ հառած,  
Ուրախ է այնքան:  
Ուրախ է, որ գու  
Գործում ես իր հետ.  
Ուրախ է, որ գու  
Էնկեր ես հավետ  
Ոտնահարել ես  
Աղաթը հիբ.

Հպարտ կանգնել ես  
Սեմին նո՞ր կյանքիւ  
Պայքարում եք դուք,  
Ապլում մի՛ շնչով.  
Օրերի լուսեղ՝  
Խինդ ու կարկաշով;  
Դազգահին հակված,  
Ուկեծամ աղջիկ.  
Դարձել ես բացված  
Գարունքվա ծաղիկ:

1933.

Ա. Բ Տ Ե Բ Է

Արտերը ծով ու ծփուն  
Օրորվում են մեղմագին.  
Արտերը ծով ու ծփուն,  
Տարված հովի շոյանքին:  
Մի նոր թափ կա հանդերում,  
Պուրակներում այն հեռու.  
Մի նոր թափ կա հանդերում  
Ու հորդացող շատ առու:  
Արևի շողքն է կաթել  
Տրակտորի ուսերին.  
Արևի շողքն է կաթել  
Թափ ու կանաչ հանդերին:  
Անուշ երգը գեղջուկի  
Ծակալվում է գյուղից գյուղ.  
Անուշ երգը գեղջուկի  
Թափանցո՞ւմ է ամեն հյուղ:  
Արտերը ծով ու ծփուն  
Օրորվում են մեղմագին.  
Արտերը ծով ու ծփուն,  
Հմայցո՞ւմ են իմ հոգին:

1933.

ՀՅԱ

Արեն հագել է սսկի  
Ու հյուր եկել հանդերին,  
Վառել ծաղկունքը կյանքի՝  
Անուշ ժպիտ շուրթերին:

Ցողն է լառել կանաչին,  
Առավոտ է նոր տաղի,  
Հովն է շոյում կակաչին,  
Բացված դոշին իմ տղի:

Ջով լանջերին սարերի  
Ու արտերում այն ծփուն  
Ջնգում է երգն օրերի.  
Անուշագին ու խնդոն:

Առուներն են խոխոչում  
Թավուտներում ծիծաղկուտ.  
Նրանք ինձ էլ են կանչում,  
Ու ես նրանց եմ կարոտ:

1933.

## Տ Ա Ւ Ն Ը

Կանգնել է փոքրիկ, մի ցածրիկ տնակ,  
Մարմար սյուների կամարների տակ.  
Շուրջը վառվռուն ծաղիկներ այնքան,  
Վարդ ու շուշանի աշխարհ դյութական:

Ամեն մարդ այնտեղ դառնում է աշուղ  
Ու գովերգում է ամեն թուփ ու շյուղ,  
Համբույր է քաղում ամեն մի ծաղկից  
Եվ չի հագենում սիրուց ու կյանքից:

Ու մարդիկ, հագած խաս ու լալազար,  
Դալիս են երկրի կողմերից հազար,  
Գալիս են՝ տեսնեն տունն այդ լուսեղեն,  
Բւր բարակել է մի սիրու հրեղեն:

Մի սիրու տենչափառ ու փոթորկահուզ,  
Որ արշալուսից մինչև արշալուս,  
Համակված սիրով մեծ ժողովրդի,  
Ապրել է նրա տենչերով հուռթի:

Գալիս են, տեսնեն տունն այդ լեգենդար,  
Առը ճշմարտության օրրանն այդ արդար,  
Ուր ծնվել է նա, ախտանն աշխարհի  
Ու փշրել շղթան չարի ու դահի:

Փշբել է լուծը դաժան բռնության,  
Վատել արեք չարքաշ մարդկության  
Ու երջանկության ծաղիկը բռոր  
Պահել ձեռներում իր հղորազոր:

Եվ արեգական տողերով անմար  
Նոր օրենք գրել աշխարհի համար,  
Ու այդ օրենքովն իր արգարադատ  
Կոել է բախտը օրերի աղատ:

Տվել է մարդուն վեհ թոփշք ու թև,  
Ու մարդն է ապրում թոշնի պես թեթև,  
Ճախրում դեպի վեր, որախ ու աղատ,  
Հայրենի հողին մոտ ու հարազատ:

...ինձ թվում է, թե տեսնում եմ նրան,  
Լսում եմ ձայնը նրա հաղթական,  
Ամեն մի հնցուն, մի բառ լսելիս,  
Կարծես թե նրա անունն են տալիս:

Թվում է, թի նա հենց ինքն է կանգնեն,  
Արև հայացքով աշխարհը գրկել,  
Ու ծովի նման փոթորկվում եմ ես,  
Հոգիս է թիւմ բարձրունքները վես:

Այսպես ամեն օր, միշտ և անընդհատ  
Գալիս են մարդիկ, դեմքերով զվարթ,  
Դեմքերով վասուն, նման արեգին,  
Շուրթերին՝ կոբա անունը անգին:

Գալիս են, տեսնեն տունն այդ լեզենդար,  
Մուրք ճշմարտության օրրանն այդ արդար,  
Ուր բարախել է սիրտը լուսեղեն  
Եվ շունչ է առել ողին հրեղեն  
Մեծ Ստալինի—Հանճարեղ մարդու,  
Որ ողջ աշխարհի ջահն է լուսատու:

Ն Ա Վ Ա Ս Ի

Եփում է ծովը, ծովը կտպուտակ,  
Բնիրին առած ծիրանի բեհեղ,  
Ալիքները ոնց շուշաններ հստակ—  
Ժողովում են անո՞ւշ—քնքույշ մանկան պես:  
  
Եվ մի արևավառ ու հաղթ նավաստի  
Զուրն է ակոսում բաղուկներով կուռ,  
Տարված հմայքով իր վառ երազի  
Երգում է քաղցր ձայնով զբնգուն:  
  
—«Օ՛, ծով դու սիրուն, ծով Կասպիական,  
Բրբան հմա՞յք կա զբեշում քո պարզ.  
Քո ակունքներում գոհաբներ այնքան—  
Աշխարհներ շարժով հակինթ ու ալճակ...  
  
Ես քո փոթորկուս չըերումն ապրում,  
Սիրում եմ հախուսոն խննիւթյունը քո,  
Խենթությունդ ինձ դլութա՞նք է բերում,  
Այս արևաշտա մեր երկնի ներքո:  
  
Ես քեզ հետ եմ միշտ, քեզնից անբաժան,  
Օ՛, ծով դու խորունկ, մայր իմ կաթողին,  
Մեզ չի անջատի մըրիկը դաժան  
Անգամ կատաղի փոթորկի ժամին:  
  
Կուրծքս զեմ կտամ քո ալիքներին,  
Աւ կենեմ մարտի նենդ թշնամու զեմ.  
Ամքակուռ ու հաղթ մեր պարփակներին  
Ես ոտ չե՞ն ցա երբեք իժերը դժխեմ:

Օ՛, ծով իմ սիրուն, ծո՞վ իմ կապուտաչ  
Ռըքան հուշեր կան քո խորունկ ծոցում.  
Ամեն մի ալիք ինձ մոռ ու ճանաչ—  
Ամեն ալիքում կո սեր ու ցնծում...»

Երգում է այսպիս նավաստին հպարտ,  
Ու ճեղքում ջուրը բազուկներով կուռ.  
Հազար ու հազար մակույկներ զվարթ  
Զեփյունի շնչով օբորվում են լուս:

1936.

Հայութանք եօդ կ'առ Տաղման եօդ խուտ ։ Ա  
հայրն թնազաք ոչ մօք աշխան մազզն  
— աման ու առան եօդ պահ ին մանն  
ու առանեաք ու առա ասք հայրքը մանն

Հայութանք մազզանք առայս է հայրք  
**ՄՈՐ ՈՒՂԵՐՁՅ** ուրաց հայրքն ան  
կրաք դժուքափան զարման ու զարման  
Քեզ բանակ եմ ուղարկում, Հայութանք,  
Գնաս բարով, անո՞ւշ շան,  
Ճամփեղ ծաղկո՞վ եմ զուգում,—  
Ետ զաս շախով, անո՞ւշ շան:

Հայրենիք, քե՛զ եմ տալիս  
Իմ արե՛լ, իմ բալեն,  
Քեզ մոտ խինդո՞վ է զալիս  
Իմ ծաղի՛կը, իմ լալեն:

Իմ պարտեզի ծաղկունքից  
Լավից լա՛վն եմ ուղարկում,  
Սրտիս բյուրեղ ակունքից—  
Հոգուս նվերն եմ ղրկում:

Հայրենիք, քե՛զ եմ տալիս  
Իմ ծաղիկը, իմ լալեն,  
Քեզ մոտ խինդո՞վ է զալիս  
Իմ արել, իմ բալեն:

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ

(Նվիր Համեր(թ) 18-րդ համաշխառքն)

Ոսկի գիրքը նոր օրննքի, իր տողերով՝ մարզարտաշար,  
Պատմում է քո կյանքի մասին, չնաշխառհիկ ու լեզենդար.  
Աշխարհ ցնցող քո գործերից, թոփշներից—մտքիդ պայծառ  
Քո դեմ մուլին է փոխառում լույսի ու գիշերը դառնում ցերեկ.  
Լացը՝ ծիծաղ մշտակարկաշ, տիսրությունը—ցնծության երգ:

Դու ևս կանգուն ու անհողդողդ կյանքի սյունը—

շողազարդված

Եվ թե ներկան, թե ապագան քեզնով է միշտ թևավորված,  
Հար անսպառ աղբյուրները խմատության—քեզ են տրված:  
Դու դարավոր կաղնու նման խո՞րն ես թաղել արմատը քո,  
Ոչ մի մրրիկ չի թեքի քեզ—այս աստղազարդ երկնի ներքու:

Արեն իր շող վրձինն առած քո լույս պատկերն է նկարում,  
Քանիդակործն իր մատներով՝ մարմար քարին քեզ է

կերտում:

Գեղեցիկության ծաղիկը վառ քո կրծքի տակ է միշտ փթթում...  
Քո ձեռքին է կյանքի թասը,—երջանկության գինով լեցուն,  
Խմիր, օ՛, մարդ, սքանչացի՛ր հավերժական սիրով ցնծուն:

Քանզի դո՛ւ ևս ուժեղների—ուժեղը հա՛ր ու միշտ անպարտ,  
Դու ևս հերոսն հերոսների, բարձունքների արծի՛վն հպարտ,  
Դու ևս վարում մրրիկ ու ամպ, ամեն խիզախ գրոհ ու մարտ,  
Քո սրտից է այզը ծագում—հավետ անմար իր շողերով,  
Քաղիք օրը թարթում է միշտ քո սրատես շող աշքերով:  
1939.

ԱՐԱՋՆՈՒԹԻՒՆ

Դու ես շրջում զեկին աշխարհի,  
Դու ես սոկի սյունն աշխարհի.  
Դու ես փնջում սրտերը մեկ—  
Դու ես անձմահ ե՛րդն աշխարհի:

1940.

ԱՏԱԼԵՆՅԱՆ ԲԱՋԵՆԵՐԻՆ

Տալիս իմ ձեզ սիրտս նվեր,

Նա տաղարան է ոսկեբառ,

Կտա նա ձեզ հուր ու թևեր

Ու կդպի ձեզ սիրտբար:

Արևաշյա՞ օդաշուներ,

Արևաշունչ իմ բազեներ:

Փերուզափայլ երկնի մովում,

Կապուտաշյա ծփուն ծովում,

Ճերմակ փրփուր ամպերի մեջ,

Դուք եք ճախբում՝ սիրով անշեշ:

Արևաշյա՞ արևաշո՞նչ,

Արևատե՞նչ իմ բազեներ:

Զեզ է ժպտում շպն տռաջին,

Զեզ է թռչում ցողն առաջին,

Այդն առաջին ճամբույրը վառ

Զեզ է հղում՝ սիրով պայծառ...

Արևաշյա՞ օդաշուներ,

Արևաշունչ իմ բազեներ:

Ճանգակ առում՝ ձեր ձայնն ունի,

Վարդը ալգույն՝ ձեր սիրտն ունի,

Սոխակի եթզը—ե՞րդն է ձեր—

Դուք եք վառում սեր ու հուզզեր:

Արևաշյա՞ արևաշո՞նչ,

Արևատե՞նչ իմ բազեներ:

Կոռանկների երամի պես  
Շարվել եք գուք երկնբով մեկ.  
Կարապներ եք ծովում բեհեղ—  
Դուք եք ցրում մշուշ ու մեզ...  
Արևաշյա՞ օդաշոներ,  
Արևատենչ ի՞մ բաղեներ:  
Կյանքի զուալ ակոնքների  
Գոհարն եք գուք, վառ օրերի  
Ջահը անմար՝ ձեզնով վառուն—  
Սիրո վտակն եք վարարոն...  
Արևաշյա՞ արևաշոնչ,  
Արևատենչ ի՞մ բաղեներ:  
Տալիս եմ ձեզ սիրոս նվեր,  
Նա տաղարան է ոսկերառ,  
Կտա նա ձեզ հուր ու թեր  
Ու կգգվի ձեզ սիրաբար:  
Արևաշյա՞ օդաշոներ,  
Արևատենչ իմ բաղեներ:

1940.

## ՀԱՅՐԵՆԻՔ

Քո հովերից թե առած  
Ազատ հա՛վք եմ ծվարած  
Քո լեռներում նոր ծաղկած,—  
Քո աղջի՛կն եմ, Հայրենիք:

Ազբյուրներիդ պաղպատշուն  
Ջրերից եմ զովանում.  
Դու իմ սիրո խոխոչուն  
Պարզ վտա՛կն ես, Հայրենիք:

Քո ամեն մի թո՛ւի, սաղարթ,  
Ամեն ծաղի՛կ, փուշ ու վարդ,  
Սրտիս մո՛տ ու հարազատ,—  
Քո գուսա՞նն եմ, Հայրենիք:

Ինչ որ լավ բան եմ տեսնում,  
Քեզ համար եմ երազում...  
Քեզնով հպարտ միշտ թևում,—  
Քե՞զ եմ երգում, Հայրենիք:

1940.

## ՅԱՍՈՒՄ

Ես կուզենալի պոռ ամպրոս լինել,  
Լեռնեբը կիսող հրացայտ կայծակ.  
Մի ակնթարթում մոխիթ դարձնել  
Այդ շնագալլին—լոլիրշ ու անարդ:

Աչեղամռունշ որոտ լինեի,  
Հրաբուխ լինեի խենթ ու մոլեղին,  
Հիալերյան որջը հիմքից քանդեի,  
Որ մի քար անդամ չմնար քարին:

Կուզեի լինել մի դիպուկ սուր նետ,  
Կըզեի անգութ սրտի խոռոշում.  
Աչքերիս առջև կովեր մահու հետ,  
Կծկվեր ու բացվեր արյան մահճում:

Այսպես եմ ուզում, այսպես են ուզում  
Հազար ու հազար մայրեր ինձ նման.  
Մի մեծ ցանկությամբ ենք մենք սպասում  
Խսելու լուրը հրեշի մահվան:

Հափատում եմ ես իմ ժողովրդին,  
Իմ ժողովրդին այս հերոսական.  
Սուրբ ազատության վառ երգը շուրթին,  
Այս անդամ էլ նա կելնի հաղթական:

ՀԵԶԻՐ, ԻՄ ՔՆԱՅ

Հնչի՛ր, իմ քնար,  
Սիրու իմ ոսկելար,  
Ավելի ուժգին, ավելի թափով,  
Բանզի ևս գիտեմ,  
Որ հրեշտագեմ  
Թշնամին դաշան պիտ մեռնի շուտով:  
Հավատում եմ ես,  
Հավատո՞ւմ եմ ձեզ  
Ո՞, ժողովուրդներ իմ հերոսական.  
Ժամանակներ են  
Եկելու անցել,  
Պուք շա՞տ եք տեսել ոսոխ չարակամ...  
Տեսել եք, տանջվել  
Բայց հաղթանակել՝  
Տալով թշնամուն մա՞սցու հարված.  
Այս անգամ էլ ես  
Հավատում եմ քեզ,  
Չեր գեմ ծունկ կիշնի թշնամին պարտված:  
Եվ նորից, նորից  
Դառ ծաղիկներից  
Հյուսված կյանքը ձեր, գիրկը կբացի,  
Նորից կտեսնես  
Աբե՞զը հրկեզ,—  
Կինդո՞վ կլցվի աշխարհը լացի...»

Քաջ ու անվեհներ  
Կտրիճները մեր  
Նորից տուն կտան. կդրկեն չերմին  
Ծեր մորս, մանկան,  
Սիրած աղջկան...  
Հայրենի հողին, մոտ ու մտերմին...  
Ամեն մի շուրթից  
Կհնչի նորից  
Ծրգը խնդության ու հաղթանակի.  
Գինով ու բազով,  
Անուշ գեղ նազով  
Նորից կծախրեն թևերը կյանքի:  
Հնչի՛ր, իմ քնար,  
Սի՞րտ իմ ոսկելար,  
Ավելի՛ ուժգին, ավելի՛ թափով.  
Քանզի ես գիտեմ,  
Որ հրեշտագեմ  
Թշնամի՛ն դաժան պիտ մեռնի՛ շուտով:

1942.

## ՆՐԱՆ ԵՄ ԵՐԳՈՒՄ

Նրան եմ երգում, ով որ խորընթաց բազեի նման  
Մի հուժկու թափով ճիշդում է կործքը սև-սև ամպերի,  
Ով կայծակնացայտ իր սուրն է խրում անդութ ու դաժան  
Ռսուսի սրտում ու մարում լույսը նրա ալքերի:

Նրան եմ երգում, ում երակներում արյուն է հոսում  
Մարտերում կողիված ու դրուցազնական իմ ժողովրդի.  
Ում աշքերի մեջ հավիտյան անշեշ արեն է վառվում,  
Եվ միշտ թարմ պահում սուրբ աղատության պսակը վարդի:

Նրան եմ երգում, ում բազուկներում ուժն է քաշ Դավթի  
Ով որ անսասան ու հար տենչացող կամք ունի հզոր,  
Ով որ հիտլերյան հրեշների գեմ ելած գոռ մարտի,  
Հաղթող դուրս կցա ու ետ կդառնա ոնց խիզախ զինվոր:

Նրան եմ երգում, ով չի նահանջում երբեք իր դիրքից,  
Ով որ մի զարկին հազար զարկով է տալիս պատասխան.  
Ով չի արտնջում, ու չի նահանջում մահացու վերքից—  
Իր կյանքի գնով խորտակում է սև բանտ ու կախաղան:

Նրան եմ երգում, ով Հայրենական այս պատերազմում  
Պատվով դուրս կցա ու կտսակի անվամբ հերոսի,  
Ում բազուկներում քաջորդու ուժն է, ու երակներում  
Արյունն է հոսում վեհ ու աննկուն իմ ժողովրդի:

## ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ՊԱՐՏԻԶԱՆԱՌԻՑԻՆ

Վերջալույսի դեմ, անտառի խորքում,  
Դարավոր կազնու շվարին կանգնած,  
Հրացանը ձեռքին ճամփեքն է հսկում  
Պարտիզանուհին՝ սուր ու հուր հագած:  
Երկու աշբերն իր, դարձրել է հագար  
Աւ թափանցում է ամեն արահետ,  
Հիշում է օրերն իր այն լալաղար,  
Հանդիպումներն իր սիրած աղի հետ...  
— Օ, իմ հայրենի անտառներ կանաչ,  
Ի՞նչու եք գարձել այդպես անձանաշ.  
Չէ որ ձեր ամեն, ամեն թիփի տակ  
Թողել եմ քանի հուշ ու հիշատակ...  
Զեր ծաղիկներում այդ լի խինդ ու բույր,  
Թողել եմ քանի մայիս ու համբույր...  
Այնքան հարազատ չըեւում ձեր պարզ,—  
Թողել եմ քանի հայացքներ ես կեզ,  
Երբ ամեն անգամ գարունն էր ծաղկում,  
Ես ծաղիկ էի գարունի գրկում,  
Գարմոշկան ձեռքին, երգը՝ շուրթերիս,  
Լցված վերելքով կենուաշող երկրիս:  
Եվ ավազ, այսօր երբ նայում եմ ձեզ.  
Այնուաված ու մերկ... փոթորկվում եմ ես,  
Այնպէս է կծկվում սիրտս կրծքիս տակ  
Եվ լուս մղկառում ցավով անհատակ...»

Ու զիտեմ սակայն, որ մի օր նորից,  
Նորից պիտ ծաղկեք, դալարեք զվարթ,  
Նորից ձեր գրկում պիտի ժպտամ ես,  
Զեր գրկում, որ ես ինչքան եմ երդել...  
Ու զեռ պիտ երգեմ աղելի քան վառ,  
Լցված նորանոր հույսերով պայծառ:  
Գուք, իմ հայրենի անտառներ ճանաշ,  
Զբեր՝ զովասուն, ափերով կանաշ,  
Զեր հազարանուն ակոնքները շինջ  
Մանկության նման հարազատ են ինձ:

1942.

Հյուծված, կիսամերկ Կոբզարն ահա  
 թանգուը դրած չոր կրծքի վրա,  
 Անհուն վրեժով, ցասումով սրտի—  
 եռոր վիշտն է երգում իր ժողովրդի:  
 — Զարթնի՛ր, Տարաս, ի՞մ սիրելի,  
 Զարթնիր ու տես արնով են լի  
 Քո հանդերը ոսկեծիուն,  
 Քո երկնի տակ կանչում է բուն...  
 Քո հայրենի հողի սրտում  
 Քանի՛ շահել սիրտ է մարում:  
 Աղջիկներիդ ծիծաղի տեղ  
 Գնդակնե՛րն են շաշում ահեղ,  
 Քո հարազատ հայրենիքում  
 Հազար մայրեր են հեկեկում:  
 Զար թշնամու սուրն է շողում,  
 Աշեղից ծով արցո՞ւնք մաղվում.  
 Բայց ես գիտեմ, օ՛, իմ Տարաս,  
 Այս էլ կանցնի որպես երազ.  
 Շատ ենք տեսել ցավ ու դավեր,  
 Զի՛ խավարել արել մեր:  
 Մեր հայրենի հողի վրա  
 Նա չի՛ մնա, նա չի՛ մնա:

ԳԹՈՒԹՅԱՆ ՔՈՒՅՐԸ

Ուր էլ լինես,  
Քեզ հետ եմ ես  
Ահեղագոռ մարտերում,  
Ուր անհամբեր  
Ու մահաբեր  
Գնդակներն են խենթ պարում:  
Եթե հանկարծ  
Կրծքիդ բացված  
Վարդեր տեսնեմ խորախոր,  
Օ՛, սիրելի՛ս,  
Երակներիս  
Ալ արյո՛նը կտամ քեզ:  
Կգուրգուրեմ,  
Կփայփայեմ  
Սիրագորով քրոշ պես:  
Շրթունքներիդ  
Դալկաժալիտ  
Ծաղիկները կապտավուն  
Կցողեմ իմ  
Այնքա՞ն ջերմին  
Համբույրներով՝ լի ավյուն:  
Նոր կյա՞նք կտամ,  
Նոր շունչ կտամ,  
Նոր թև կտամ թռչելու,  
Գնասս նորից  
Կյանքովդ անբիծ  
Ուրիշ կյանքեր փրկելու

Ա. Գ Ո Բ Ե Զ Ա. Ն

25-ամյակին

Հայաստանի լուսագագալի լեռներից հմ  
հկել հս,  
Սեան լճի փիրուզափայլ տփերից եմ  
հկել հս,  
Ծաղկաձորի Հաղպարերանդ ծաղիկներից  
լիունջ արած—  
երդ ու տաղով, սեր ու սաղով Հյուր եմ եկել  
այսօր քեզ:

Աղբեկշա՞ն,  
Աղբեկշա՞ն:

Ժողովրդիս ողջունի խոսքն եմ բերել ես  
քեզ Համար,  
Սրտի անհո՞մ ուրախության խոսք եմ բերել  
քեզ Համար,  
Անքակտելի եղբայրության անմարելի  
սիրով լի—  
Իմ պապական ոսկի թասով Հին գինի եմ  
բերել քեզ:

Աղբեկշա՞ն,  
Աղբեկշա՞ն:

Գուսանական գաստաններով ու տաղերով  
զլութական

Գովքդ ևմ անում երջանկաբեր քո այս տոնին  
Հաղթական.

Քո կառուցող որդիներին և երգերիդ  
Հիասքանչ  
Հաղերժական եղբայրության սերն եմ բերել  
Հայկական:

Աղբբեշա՞ն,  
Աղբբեշա՞ն:

Հայաստանի լուսագագաթ լեռներից եմ  
Եկել ես,  
Սեան լզի փիրուղափայլ ափերից եմ  
Եկել ես,  
Մաղկաձորի հաղարերանդ ծաղիկներից  
Փունչ արած—  
Երդ ու տաղով, սեր ու սաղով հյուր եմ Եկել  
այսօր քեզ:

Աղբբեշա՞ն,  
Աղբբեշա՞ն:

1945.

ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀՈՒՅԶԵՐ

Քայլում եմ ահա խոր ձորակն ի վեր,  
Մշո՞ւն է փոել շղարշը ճերմակ.—  
Դողում է հեռվում մի ծանոթ ստվեր,—  
Գետն է շառաշում ընկուզենու տակ:  
Չիո է խրխնջում մոտակա մարդում,  
Գդվող ձայներ են հասնում ականջիս.  
Հողմահար սիրոս նորից է ծաղկում,—  
Անո՞ւններ թառում կարոտ շուրթերիս:  
Եվ քայլում եմ ես, քայլում գեղի վեր,  
Աշքերս հառած արև բարձունքին.  
Հողիս է առել ուկեհո՞ւր թեր  
Չեր գիրկն եմ գալիս կարոտնե՛ր, կրկին:

1945.

## ԲԱՐԻ ԳԱԼՈՒՏ

Քեզ բարի գալու ատ, իմ հերոս եղբայր,  
Թույրդ հպարտ է քո հաղթանակով,  
Թացել եմ քո դեմ դուռս սիրաբար,  
Իմ գուանական անուշգեղ երգով

Վերցրու այս բաժակն ու անուշ արա  
Մեր նախնիների թողած հին գինին.  
Օրհնանքով են լի շիթերը նրա,  
Խմիր ու հիշիր քո սուրբ պապերին:

Սրտիս անթառամ ծաղկումքն եմ վիռել  
Թո ոտների տակ այդ լուապսակ.  
Դու աշխարհի շափ ինձ խինդ ես բերել,  
Գարումն ես բերել օ՛, իմ արեգակ:

Իմ գուանական անուշգեղ երգով:  
Թացել եմ քո դեմ դուռս սիրաբար,  
Թույրդ հպարտ է քո հաղթանակով,  
Քեզ բարի գալուստ, իմ հերոս եղբայր:

1945.

Ա. Մ Ա. Ա.

Մտնում եմ այդի ու ժպտում են ինձ  
Մրգերով առան ծառերը դալար,  
Սիղապատ ու զո՞վ մոտակա ձորից  
Գետի կարկաչն եմ լսում միալար:

Ու ձեռից բռնած իմ փոքրիկ մանկան  
Կանգնում եմ շուրին ծիրանի ծառի.  
Մեղմ դայլայլում է սրինգն հովվական, —  
Ծաղկա՞յուս լանջից սիղապատ սարի:

Ծովի պես ծիփուն արտերը հասկի  
Ծրորվում են մեղմ զեփյունի շնչով:  
Սմեն պուրակից խինդ ու բերկրանքի  
Նվազն է լավում երջանիկ հյանքի:

Հանց արծաթ գոտի հանգերի մեջքին  
Առվակն է վաղում հեղոցվ մանկան,  
Ծաղիկ ու դալար նուրբ ու քնքշադին  
Փարվել են նրան սիրով մայրական:

Արեկի ոսկի ցոլքերն ուսերին  
Ինչպես գանգրավարս գեղեցիկ աղջիկ  
Անգին գոհարի մանյակը լանջին  
Ջրվեժն է պարում հովի դեմ մեղմիկ:

Գերանզիներն են արծաթին տալիս  
Ոսկի հասկերի կենսաբույր դրկում,  
Տղա ու աղջիկ անուշ խնդալիս  
եռորձերն են կապում ու անուշ երգում:

Նորահարսի պիս-թավաղզե՞ստ, սիրուն  
Մարգերն են ժամառմ մեր կոլխովական,  
Կյանք է կարկաշում սիրով վարարուն—  
Ռիլ ակոմքներից հավիտենական:

Ու Հրձիկում եմ իս այդ սիրավառուն  
Մարդկանց շարքերով հարազա՞տ այնքան:

1946.

Մ Ա Ս Կ Ա Ս.

Ամեն անգամ երբ արշալույսն է ծագում,  
Բացում քնքույշ թերթիկները վարդերի  
Ու շաղ տալիս փիրուափայլ երկնքում  
Արևիոշին կատարներին լեռների...  
Հազարանուն ժողովուրդն է քեզ նայում,  
Տեղնով հպա՞րտ, քեզնով խնդո՞ւն ու արի:

Պայքարաշունչ քո գրկումն է առկայծել  
Մեծ կենինի մտքի արեն հար անձար.  
Լուսաճաճանչ քո գրկումն է ծիլ առել  
Ազատության ձնծաղիկը տենչավառ.  
Ժողովրդոց սուրբ դաշինքն ես դու կապել,  
Նրանց երկրից ցրել ամեն մի խավար:

Ինչպես որդին տանը՝ հեռու հայրական,  
Ու ճամփորդը հեռվում թողած աղբյուրին,  
Մոսկվա', ես քեզ կարոտում եմ անսահման,  
Կարոտում եմ քո կրեմլյան լույսերին,  
Որոնք ասես աստղեր լինեն զյութական,—  
Հավերժավառ ժպիտն իրենց շուրթերին:

Ու ես հեռվում, խաղաղ ու լույս հարկիս տակ  
Քեզ եմ երգում, քո հանճարին երազում—  
Ստալինին՝ իմաստությամբ անհատակ,  
Որի սիրով է ամեն սիրտ բերկում:  
Ողջ երկիրը շատ դարերով տառապած—  
Նրա արդար օրենքով է լի խնդում:

Դու դարձել ես միլիոնների օրորան,  
Քո գրկից է բխում ավրյուղը կյանքի  
Ու թե տալիս թե ծերուկին, թե մանկան.  
Գուաններն ամեն ցեղի ու ազգի  
Գովերգում են ժողովրդիդ հաղթական,  
Քո աշքերով տեսնում լուսոց դալիքի:

1947.

Օ Լ Գ Ա

Հիշո՞ւմ ես, Սլոտ, Սովոր այն ծաղկուն,  
Որտեղ ես ու դու ամեն իրիկուն  
Նատած ծովափին զրուցում էինք  
Աշբներս հառած ծփանքին դողմարիկ:  
Դու պատմում էիր քո Ռևրախնացից,  
Ես արեագնմ իմ երեանից:  
Եսրթ, Հեզահամբուլը քո աշքերի պես  
Երկի՞նքն էր ժպառում թե ինձ և թե քեզ:  
Քո ոսկեղանգուր զլուխն իմ ուսին  
Մինչև ուշ զիշեր այսպես միասին  
Խորանո՞ւմ էինք ակունքը կյանքի  
Ու թերթում զիրքը ոսկի զալիքի:  
Մի օր էլ երբ մենք թեանցուկ արած  
Լուռ անցնում էինք ծառուղով ծաղկած...  
Դու շշնչացիր,—ես քեզ կսպասեմ  
Իմ ծաղկածիծաղ Դնեպրի ափին:—  
Երենք անշատվեցինք մի արեագնմ  
Զքնաղ առավոտ, երբ ոսկի արփին  
Էր սիրահամբուլը վարդերն էր փոել  
Ու մեզ երկուսիս քնքույշ պարուրել...  
Ակնթարթն այնպես արագ էր սահում,  
Այնպես անո՞ւշ էր հովը սվավում.  
Այնքան դյութա՞նք կար ծփանքում ծովի,  
Եվ քո երազուն աշերում ծավի...  
...Մի օր էլ երբ քո երկնի կամազում  
Գիշատիչների կոփնչն էր լոլում,

Արշավում էին ճողմերը խելտո  
Ու ստնահարում դաշտերդ դալար...  
Իմ սեկ լեռների արծիվների հետ  
Քեզ մոտ ճամփեցի սի՞րոս սիրավետ:  
Չէ որ քո վիշտը իմ վիշտն էր անծայր...  
Դու քանի՛ արյան գետերով անցար  
Ու պայքարելով հասար նորանոր  
Հաղթանակների, կյանքի բախտավոր:  
Եվ ջիմա երբ գու նորից ժպտադին  
Նայում ես ազատ, պայծառ երկնքին  
Քո Ավրախնայի, և օդն ես շնչում  
Հայրենի հողիդ, ուր ամեն ինչում  
Թարմություն կա մի, կա թափ ու եռանդ,  
Խինդով է լցված սար ու սարավանդ...  
Ես էլ եմ քեզ հետ, քեզնից անբաժան,  
Օ՛ քուր իմ, քո՛ւր իմ հարազատ այնքան:  
Երկուսիս սիրտն էլ մեկ է բարախում  
Մեր Սովետական ծաղկաբույր հողում.  
Ուր զրոցի տակ մեծ ստավինյան,—  
Ուրա՛խ է հնչում ե՛րգը մայրական:  
Իմ Հայաստանի արեղ վկա,  
Քեզ չե՛մ մոռանա, սիրելի՛ Օլգա:

1948.

# ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈՒՅԶՁԵՐ

Օ Բ Ա Բ

Զույգ դալարուն աւոիներից  
Ճո՛ջկ եմ կապել գետափին,  
Ճոճկը հյուսել ծաղիկներից  
Ու քո՛ւն դրել իմ բալին:

Անուշագին հո՛վն է փշռմ,  
Համբո՛ւր քաղում աշերից,  
Զուլալ առուն թակ կանաչում,—  
Օրո՛ր ասում քնքշալից:

Մուշ-մո՛ւշ անո՛ւշ քնել է նա,  
Իմ թառլանը գանգրահեր.  
Վարդափիթիթ դեմքի՛ն նրա,—  
Իշել է զո՞լ մի սովեր:

Ու հրճվալից կանգնել եմ ես,  
Չեմ հագենում նայելուց,  
Նա արկի շողքն է կասես,—  
Կաթած չերմի՛ն իմ հոգուց:

1917.

## ԵՐԱԾ ՄԱՆՈՒԿԱ

Նորազարդ գարնան բողբոշ ծաղկի պես,  
Երազ մանո՞ւկս է իմ կյանքը զուգել.  
Ժպտուն ու կայտառ, թիթեռնիկ կասես  
Պարո՞ւմ է անվերջ, անվե՛րջ, անարգել...

Գիշեր ու ցերեկ անհանգի՞ստ, անքուն,  
Քաղցր երկյուղից սի՞րտս է դողում.  
Ինձ համար դեռ մութ երկունքը դժգույն  
Միրաշո՞ղ կյանքիս, արցո մք է մաղում...

Ես մա՞յր պիտի լինեմ... Թ՝, մայր սիրասուն,  
Լուս գալիքներին ընդառաջ վաղող.  
Անբիծ արբունքիս պտուղը հասուն,  
Աշխա՞բճ պիտի գա, աշխարհը ծաղկող...

1921.

ԵՅ ՄԱՅՐ ԵՅ ԴԱՌԵԼ

Թողած վաղեմի խենթովունս ողջ,  
ևս մայր եմ դառել, զլուտ ու բարի,  
Աշղիկ օրերիս հույսերը բողբոշ՝  
Լոկ անց ու գարձն է մարդկանց, աշխարհի...

...Գալունը, որի ծաղկելն ինձ համար  
Խրախճա՞նք էր միշտ երգի ու պարի,  
Հիմա իմ գիրկն է դառել արևոտ  
Գալունը պայծառ, բույր ու համբույրի...

Եւ չեմ կարուում արեի ժպտին,  
Իմ երեխայի ժպիտն եմ սիրում.  
Նրա մանկական խաղերն իմ սրտին  
Ծաղկունքից անուշ դյուժա՞նք են բերում...

Այնպես քաղցր է, ու այնպես թովիչ  
Երգն օրորոցի, երբ ևս եմ հյուսում,  
Երբ իմ մայրական շուրջերովն անբիծ,  
Նանի՞կ եմ ասում, արթուն երաղում...

Արբում եմ շնչից իմ երեխայի,  
Ու կամքս տալիս նրա հաճույքին.  
Զէ՞ որ ևս մայր եմ զթուտ ու բարի,  
Մոր սի՞րն եմ սիրում, սե՞րը կաթողին...

## ՍՊԱԾՈՒՄ

Ուկեկամար օրորոցդ զարդարել,  
Սպասում եմ, սպասում եմ քո գալուն,  
Ենրւ համփիդ ջահ եմ շինել ու վառել,  
Սպասում եմ քո ինձ անուշ ժպտալուն:

Թաթաշորդ պատրաստել եմ մետաքսից,  
Կապիչներդ՝ ծաղկանկար զարդարից.  
Լալ ու զմբովստ, փրփուր մարդրիտ ու հակինթ,  
Մանյակ շինել փակցըրել եմ կամարիդ:

Ու տմեն օր, ամեն գիշեր անհամբեր,  
Սպասում եմ, սպասում եմ քո գալուն.  
Դու իմ կյանքի շերմ արեն ևս հուսաբեր,  
Սպասում եմ քո ինձ քաղցր ժպտալուն:

1921.

\* \* \*

Պարուրում եմ քեզ ու սեղմում կրծքիս,  
Փալում-փայփայում սրբության նման։  
Ու միշտ օրհներդում, որ լինես կյանքիս  
Հուսաշող այդը հավետ խնդության...

Այնպես եմ հրձվում, երբ ժպտում ես ինձ  
Քնքուց մատներով կրծքիս հետ խաղում,  
Սրբում եմ քաղցր քո գեղգեղանքից,  
Բւ անբիծ կաթու՝ շուրթերդ ցողում...

Երբ նայում ես ինձ, ջինչ աշերիդ մհջ,  
Հոգիս եմ տեսնում, բյուրեղից—բյուրեղ.  
Սիրաս կյանքիդ դիմ դողում է անվերչ,  
Այնպես եմ ցիրում ծիծաղդ անմեղ...

Վեհ բարձրունքներում ճախրսդ արծվի պես  
Տարերքի զարկ եմ կրել ես թեթև  
Հղոր եմ զգում աշխարհում ինձ ես,  
Որ կարող եղաւ կառել մի արեւ.

1921.

ՆՈՐ Է ԲԱՅՑԵԼ

Նոր է բացվել քո լեզուն,  
Խոսում, երգում ես անվերջ.  
Թիթեռի պես թռվում,—  
Պար ես բռնել ծաղկանց մեջ:

Քո ամեն բառն ինձ համար,  
Մի նոր կյանք է, նոր աշխարհ.  
Արդիշ ի՞նչ կա, որ քեզնից  
Քաղցր լինի ու դյութիշ:

1922.

## ԱՆՌԻՇ ԲԱԼԵՎԻ

Քնքուշ ու փափլիկ,  
Իմ անուազ բալիկ.

Խոր ծով ու ծիծաղ,  
Աշերիդ մատաղ,

Միշտ դու կաց ինձ մոտ,  
Իմ օր արևոտ....

Երբ իմ չերմ գրկում,  
Քնած հս լինում,

Ծիծաղից բացի,  
Չեմ վինտըռում լացի

Եվ ո'չ մի ուղի,  
Ուր անձրև մաղի...

Օբորլ շուրթիս  
Առնում թէվերիս,

Մեղմիկ, գուրգուրում,  
Ու լուս համբուքում,

Ջր դու չարթնանաս,  
Իմ լուսե երազ...

Միշտ դու կաց ինձ մոտ,  
իմ օր արեստ.

Խոր ծով ու ծիծաղ,  
Ալքերիդ մատաղ.

Իմ անուշ բալիկ,  
Քնքուշ ու փափլիկ...

1922.

## Աղջիկ ՈՒՆԵՄ

Աղջիկ ունեմ ծաղկից քնքուշ,  
Խոսքեր ունի անուշ-անուշ.  
Ժպիտն ասես արև լինի,  
Անմահ ձնունդ բարկ կրակի...

Ինչպես անմեղ թիթեռ նրբին,  
Նա է պարում սրտիս ճամփին.  
Նա է բերում բուրող գարուն,  
Հոգու թուլշանք, օրեր սիրուն...

Նա իմ գրկում, ես չեմ սպում,  
Չեմ արտասվում, չեմ հեկեկում.  
Բայ է, որ տա ինձ մի համբուզը,  
Խինդ է դառնում կյանքս պուրապուր...

Աղջիկ ունիմ, ծաղկից քնքուշ,  
Խոսքեր ունի, անուշ-անուշ.  
Մեռնիմ նրան, նրա նման,  
Ուկ կվառի սիրույս քուրան...

## ԻՄ ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿ

Իմ փոքրիկ աղջիկ, գեղեցիկ ու նուրբ,  
Քեզ նման ես էլ փոքրիկ եմ եղել,  
Քեզ նման ես էլ վաղել թփից-թուփ.  
Անհուն ճրձվանքով ծաղիկ եմ քաղել...

Քեզ նման ես էլ արևի շողբին  
Թաթերս մեկնել բռնել եմ ուզել,  
Սակայն, ա՞յս, քեզ պես իմ մանով հոգին,  
Այդ խենթ ճաճույքին երբեք չի հասել:

...Ու Հիմա երբ քեզ տհսնում եմ այդպես,  
Իմ սիրուն աղջիկ ուրախ ու ծիծղուն.  
Կարծես թե նորից մանկանում եմ ես,  
Դառնում քո կյանքին, անրիծ ու շողուն:

1923.

ԶԻ ԵՍ ՔՇԱԽՄ

Ծնկներիս նստել՝ դու ձի ես քշում,  
Արևն էլ պատին պատկերդ է քաշում,  
Եվ ես էլ քեզ հետ հրճվում եմ մեկտեղ,  
Ես էլ եմ դառել՝ մանուկ մի անմեղ:

Ես էլ եմ քեզ հետ ծիծաղում, անվերջ,  
Անփույթ մի կյանք է ծիլ առնում իմ մեջ,  
Հոգիդ իմ հոգու թևերին թառած,—  
Աշխարհն է գրկում, աշխարհը ծաղկած:

Ես էլ եմ տալիս ծափին ու ծափին,  
Ու սիրոս ձուլում քո սրտի դափին.  
Երջանկանում եմ քո անբիծ սիրով,  
Ապրում խաղերով, անուշ տաղերով:

Ծնկներիս նստել՝ դու ձի ես քշում,  
Արևն էլ պատին պատկերդ է քաշում,  
Ու ես էլ քեզ հետ հրճվում եմ մեկտեղ,  
Ես էլ եմ դառել՝ մանուկ մի անմեղ:

1923.

ԵՐԲ ԶԵՄ ԼԻՆՈՒՄ

Կարոտում եմ քո կանչերին հարազատ,  
Քո խաղերին, քո բառերին նոր ընծա.  
Գուրգուրանքիդ, համբույրներիդ անազարտ,  
Ծաղիկ ժպանիդ, որ շուրջերիդ կցնծա...

Կարոտում եմ՝ թոթով լեզվիդ մանկական,  
Ջրուցներիդ, որ խորք շունեն տակալին.  
Արցոմքներիդ ջինջ շիթերին թովչական,—  
Կարոտում եմ, կարոտում եմ սրտագին:

Երբ չես լինում մի ակնթարթ իմ գրկում  
Խենթանում եմ, խենթանում եմ քո սիրուց.  
Քո կարոտն է խորունկ հուզվում իմ հոգում,  
Ա՛յս, քո սիրուց, մոռանում եմ ինքս ինձ:

1924.

## ՄՈՐ ԱՐՏԻ ՊԵՍ

Մոր սլատի պես սիրող սիրտ,  
Չեմ' հավատում, որ լինի.  
Անբիծ հայացք ու ժպիտ,—  
Չեմ' հավատում, որ լինի:

Մոր գրկի պես չերմ ու տաք,  
Արևներն էլ շող չունին.  
Անբիծ համբուլը երկնի տակ,—  
Մոր համբուլըն է քնքագին:

Նրա ցալի պես տանջող,  
Ցալ չդիտեմ աշխարհում,  
Նրա լացի պես մաշող,—  
Լաց չեմ տեսել իմ օրում:

Մոր պես ոչ ոք, չի՛ ապրի,  
Արծիլ հպարտ թոփքով  
Որքան կյանքը սուգ բերի,  
Նա պիտ երկնի նո՛ր երգով:

Որքան էլ որ տառապի,  
Երջանիկ է ու սիրող.  
Որքան որ օրը ամպի, —  
Բալից կառնի լույսի շող:

Մոր սրտի պես սիրող սիրտ,  
Չեմ' հավատում, որ լինի:  
Անբիծ հայացք ու ժպիտ,—  
Չեմ' հավատում, որ լինի:

1924.

## ԻՄ ՄԱՅՐԻՆ ԷԼ

Իմ մայրն էլ մի օր ինձ է օրորել,  
Հենց այս օրորով ջե՞րմ ու բնքշաղին,  
Ինչպես որ այսօր ես քեզ պարուրել  
Ասում եմ—քնի՛ր, մանկիկ իմ անդին:

Նա էլ ինձ նման, ինչպես որ ես քեզ,  
Ինձ է փայտայել գիշեր ու ցերեկ,  
Օրեր է մաշել վառ ու սիրակեզ,  
Ինչպես հիմա ես՝ բալիկ իմ լի երգ:

Նա էլ ինձ նման, ինչպես որ ես քեզ,  
Ինձ է նվիրել կյանքը ծաղկաղարդ.  
Ինձնով է ապրել հույսերով պես-պես,  
Ինչպես հիմա ես՝ բալիկ իմ գլարթ:

Ու հիմա ես էլ, երբ մայր եմ դարձել  
Նոր եմ հասկանում մոր սրտի լեզուն,  
Ու նոր եմ զգում, որ զեռ չեմ սիրել  
Ես այսքան խորո՛ւնկ-սիրով մի անհուն:

1924.

## ՆՈՐ ՕՐՈՅ

Երեկվա պիս քեզ չեմ ասում  
Լալկան օրոր, իմ բալա,  
Հիմա ևս իմ օրորներում,  
Խինդ եմ հյուսում, իմ լալա:  
Երեկվա պիս ուշ չեն հագած,  
Արտն ու հանդը մեր գյուղի.  
Գեղածիծաղ կյանքը ծաղկած,  
Ունի պայծառ մի սւլի:  
Այս օրերի տաք շնչով քեզ  
Օրորում եմ, իմ անուշ.  
Որ քնած էլ արթուն լինես,  
Գալիքի գեմ միշտ աշխուժ:  
Որ մեծանաս, չես տեսնելու  
Տառապանքը մեր տեսած,  
Քո սրտի մեջ չի լինելու  
Ոչ մի սարսափ, ոչ մի լաց:  
Երեկվա պիս քեզ չեմ ասում,  
Բախծոս օրոր, իմ անուշ.  
Իմ գվարթուն օրորներում  
Խինդ եմ հյուսում, իմ քնքույշ:  
Քնի՛ր, քնի՛ր դու մո՞ւշ-մո՞ւշ...

1925.

ԵՐԵՔ ԼԱԼԱ

Երեք լալա,  
Երեք բալա,  
ոմիմ ես.

Անուշ խոսկան,  
Երեք սոխակ  
ոմիմ ես:

Գիշեր-ցերեկ,  
Ժպիտ ու երգ  
է ինձ մոտ.

Խինդ ու բերկրանք,  
Քաղցր մի կյանք  
է ինձ մոտ:

Վառ, վառվուն  
Ծաղկուն գարուն  
է զիրկն իմ.

Լաց ու կարոտ,  
Օրեր վշտոտ.  
Էլ չունիմ...

Երեք լալա,  
Երեք բալա  
ոմիմ ես

Անուշ խոսկան,  
Երեք սոխակ  
ոմիմ ես:

ԴՈՒՔ ԱՅՆԹԵՍ ԼԱՎՆ ԵՔ

Դուք այնպես լավն եք

Ու այնպես սիրուն.

Ծաղկի նման եք,—

Արևից լառուն...

Թմվլիկ ու փափլիկ

Թաթիկներ ունեք.

Քնքու՛ց ու մանրիկ,—

Տոտիկներ ունեք...

Ալիկներ ունեք,

Բյուրեղյա՞ ու զինջ.

Պաշիկներ ունեք,—

Հոտակ ու անբիծ...

Երբ ժպտում եք ինձ,

Հրճվում եմ այնպես,

Զեր ծլվլոցից—

Արբո՞ւմ եմ ասես...

Զեր աշխարհն այնքան,

Հմայքներ ունի.

Այնքան գյութական,—

Արեներ ունի...

Դուք այնպես լավն եք

Ու այնպես սիրուն.

Ծաղկի նման եք,—

Արևից լառուն...

1925.

## ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԻՄ

Այնպես հարուստ է բուրաստանը իմ,  
Անթիվ բյուրերանգ ծաղիկներ ունեմ.  
Կարմրաթուշ վարդի թփերում պահվող,  
Սոխակներ ունիմ, սիրերգող, դյութող...

Արևներ ունիմ՝ շողերը ոսկի,  
Զկներս են լողում, ջրում լճակի,  
Երկու երեխան լճակի ափին,  
Ուրախ ու կայտառ,—տալիս են ծափին...

Զան-ջան եմ ասում, վազում ընդառաջ,  
Թերս բացում, դրկում ձախ ու աջ,  
Փայտմ-իմայփայում—անվերջ համբուրում  
Ու չեմ հագենում, ու չեմ հագենում...

Յոյզք բալիկներիս սիրով պինոված,  
Երջանկանում եմ, ու երգում կամաց,  
Աշխարհը իմ դեմ դառնում է եղեմ,  
Կյանքը ալ հագած դարուն է իմ դեմ...

1926.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿ ԽՄ ԲԱԼԻԿ

Հոկտեմբերիկ իմ բալիկ,  
Այդ ինչ լավն ես, ինչ լավն ես.  
Հագիդ վարդից ալ շապիկ,  
Ծլվո՛ւմ ես ծոփ պես:

Քայլում ես աջ, քայլում ձախ,  
Ասում երգեր ճրավառ.  
Շուրթիդ ժպիտ ու ծիծաղ,  
Գու իմ փոքրիկ թմբկահար:

Քո այդ թմփիկ թաթերով,  
Ճարկ, թող թմբուկդ թնդա.  
Անցիր կարմիր շարքերով,  
Մանուկ սիրոտ թող խնդա:

Հոկտեմբերիկ իմ բալիկ,  
Այդ ինչ լավն ես, անուշն ես.  
Հագիդ վարդից ալ շապիկ,  
Ծլվո՛ւմ ես ծոփ պես:

1929.

ԶԱՐԹՆԻՐ ՔՆԵՑ

Զարթնիր քնից, ի՞մ բալա,  
Հենց նոր դարձա հանդից տուն,  
Բերել եմ քեզ փոմչ լալա,—  
Բաց աշքերդ այդ խնդուն:

Կես օրն արդեն գլորվել,  
Արել թեքվել է, տես,  
Որքան երկար ես քնել,—  
Կարոտել եմ արդեն քեզ:

Մայրդ քեզնով միշտ խնդուն  
Բերել է քեզ փոմչ լալա.  
Բաց աշքերդ այդ ժպտուն—  
Զարթնիր քնից, ի՞մ բալա:

1931.

## ԻՄ ԵՐԵԽԱՆ

Խշում է ուսին,  
Ու առուն զնդում,  
Հավիկն ափերին—  
Մեղմիկ շնդշնդում...

Ու իմ երեխան  
Ժպտում է անփույթ,  
Խաղում է անձայն,—  
Ջրի հետ կապույտ...

Գլորվում են լուռ  
Քարերը մանրիկ՝  
Մամուլը մախմուռ  
Դողում է մեղմիկ...

Ու իմ երեխան  
Հիացքով անփույթ,  
Խաղում է անձայն—  
Ջրի հետ կապույտ...

1932.

ԻՄ ՀԱՅԵԼԻՆ

Նստել է ահա աղջիկս իմ զեմ  
Հանց քնքուշ ծաղիկ,  
Սիրուն, գանգրահեր սև սաթ մաղերով,  
Աչքերով գիշեր.  
Ժպիւրեղյա ցողիկ,  
Նրան նայելիս զարթնում է իմ մեջ  
Օ՛, որքան հուշեր...  
Նա հայելին է իմ ջահելության,  
Խառնաշող կյանքիս,  
Նրան նայելիս սիրոս է բարախում  
Ծփանքով հաղար.  
Մի իւնթ հաճուքքով գրկում եմ նրան,  
Բեռում է հոգիս  
Բարձրունքները սեդ: Միտքս է թափառում  
Անթիվ ձոր ու սար,  
Թափառում անթիվ կիրճեր ու կածան,  
Անտառները խիտ.  
Զինջ աղբյուրների ափերին ծաղկուն  
Ու դալարագեղ,  
Ուր թողել եմ ես այնքան կուսական  
Վայրկյաններ լի խինդ,  
Երդեր քաղցրանուշ, մանկան ժպիտներ  
Բյուրեղից, բյուրեղ...

## ՍԻՐՈՒՄ ԵՄ

Սիրում եմ երկնի կապո՞ւտն անսահման,  
Մորս աշքերին նա շա՞տ է նման:  
Եբբ ամեն անգամ աստղերն են ժպտում,  
Թվում է նրա աշքե՞րն են թարթում...  
Խենթահույզ ծովի ծփա՞նքն եմ սիրում,  
Մորս ջերմ սի՞րան է այդ ծփանքներում,  
Գիշեր ու ցերեկ նա է բաբախում  
Թե փոթորկի դեմ, թե արե-շողում:  
Զրերի կարկա՞չն եմ սիրում այնքան,  
Կարծես թե մորս ձայնն է զյութական...  
Նրա խոսքերն են ականջիս հնչում,  
Արձագա՞նք տալիս սեղ ու կակաչում:  
Մաղկավարդ ու վառ գալո՞ւնն եմ սիրում,  
Նա մորս սիրոն է՝ հավետ գալարուն...  
Արևն եմ սիրում, արևը ու անձար,  
Արևն է մորս սի՞րը մշտավառ:

1940.

\*\*\*

Չինար հասակով, աշքերով սիրուն  
Մի զինվոր տեսա, քեզ շա՛տ էր նման.  
Ա՛խ, արդյոք ո՞ւր ես, իմ ծաղկած գարուն,  
Իմ կարիճ որդի, դու սե՛ր իմ վառման:

Երբ ժպտում էր նա՝ թվում էր դու ես  
Ու ինձ ես կանչում գիրկդ Հարազատ.  
Օ՛, այնպիս խորո՛ւնի եմ կարոտել քեզ—  
Ճերմակել են ողջ իմ մաղերը սաթ:

1943.



Այն դալար ուսին, որի ճյուղերից  
Քեզ ձոճք եմ կապել ու ասել օրոր,  
Աշա նա այսօր փթթել է նորից  
Ու սփսլում է հովի դեմ շորոր:

Այն առուն, որի գուլալ ջրերում  
Քո չնաշխարհիկ պատկերն ես թողել,  
Աշա նա նորից թավիշ դալարում  
Իր արծաթաշող գոտին է կապել:

Կարծես թե ամեն թուփ ու սաղարթից  
Քո լուս մանկության հերիա՞ն եմ լսում,  
Քո ձայնն եմ լսում, քո ձայնը դյութիւն  
Քո գեղգեղա՞նքը արթուն երազում:

Ու մի ակնթարթ թվում է, թե դու  
Ելի այն փոքրիկ մանկիկս ես ու քեզ  
Օրոր եմ ասում, ու մենք իրարու  
Ժպտում ենք քնքո՞ւց ծաղիկների պիս:

Մի սուրբ վեհությամբ հոգիս է լցվում,  
Սիրոս է բաբախում սիրով մայրական,  
Աշխարհն ինձ համար դրախտ է թվում,  
Ու կյանքը գարո՞ւմ մի արեգական:

## ՄԱՅՐԸ

Քեզ ինձնից նվեր սրբիւր, որդիս,  
Որ նախշել էի ծաղիկ օրերիս,  
Դեռ սնարիդ մոտ կախված է հիմա,  
Ոչ ոք չի դիպել ծոպերին նրա:

Գիրքդ բաց ընկած սեղանիդ վրա,  
Չեմ ծալել մի հատ թերթիկն էլ նրա...  
Կիսատաշ մատիտդ ճերմակ թղթին—  
Քեզ է սպասում, իմ կտրիճ որդի:

Անգամ հովիկն էլ ել ու մուտք շոմի  
Բացի ինձանից ու շողքից լուսնի,  
Որ ամեն գիշեր ինձ հետ միասին,  
Ջրույց է անում միայն քո մասին:

Մեկ-մեկ էլ ոսկի ցոլքերն արևի  
Զքնաղ պատկերիդ գալիս են այցի:  
Մեկ-մեկ էլ փիրուզ լուսամփոփիդ տակ  
Թիթեռն է նազում շուշանից ճերմակ:

Գիրքդ բաց ընկած սեղանիդ վրա,  
Չեմ ծալել մի հատ թերթիկն էլ նրա:  
Կիսատաշ մատիտդ ճերմակ թղթին—  
Քեզ է սպասում, իմ կտրիճ որդի:

\*\*\*

Ինչ որ անմահ է ու հավերժական,  
Սկիզբ է առնում մոր շերմին սրտից.  
Խոր իմաստության ակն անապական  
Բխում է նրա անաղարտ սրտից:

Մոր սրտում սիրո ջահն է միշտ լառվում  
Հավիտյան անմար արևի նման。  
Հույզերի ծովն է ծփում մոր սրտում  
Դարավոր կյանքովն իր խո՞ր, անսահմա՞ն:

1945.

ՓԱՌՔ ՔԵԶ, ԳԱՐՈՒՆ

Ծով փառք քեզ գարուն, ծով փառք վառվռուն  
Քո ծաղիկներին՝ իմ մանկան ժպիտ,  
Գու լցրիր սիրու սիրով մի անհուն,  
Ետ բերիր որդուս ու տվիր ինձ խինդ:

Երբ որ առաջին ծաղիկդ բացեց  
Աշխներն իրա՝ այնքան երազուն.  
Ծաղմիկս եկավ փակ դուռը բացեց  
Ու իր հետ բերեց կյանքս նորից տուն:

Հոգիս էլ նորից ծաղկեց քեզ նման,  
Ետ քաշեց մշուշն աչքերից իմ թաց.  
Ծով փառք քեզ, գարուն-գարո՞ն հաղթության,  
Տառապած կյանքը՝ նոր մեկն խնդաց:

1945.

# ՍԵՐԵՐ, ԿԱՐՈՏՆԵՐ

ԼԱՆՁԵՐ ՄԱՐԶԱՆ

Մարմար սարեր,  
Մարզան լանչեր,  
Շափաղ կտան սեղ ու ցող.  
Անո՞ւշ-անո՞ւշ  
Կիմդա՞ն մո՞ւշ,  
Երազ ծաղկո՞մք, լույս ու շող...  
Հավք ու երկինք,  
Ամպ ու ալիք,  
Եվ կժպտա՞ն, և կլան.  
Աստղ ու լուսին  
Հանդե՞պ հույսին,  
Հանդի՞ստ, ծուփ-ծո՞ւփ կցոլան...  
—Հե՞յ ջա՞ն է ջան  
Դար ու դուրան,  
Մատա՞դ լինի հոգիս ձեզ.  
Ինձ էլ տարեք  
Զեր զի՞րկն տոհք,  
Դուման սի՞րտս բացեմ ձեզ...  
Հեռո՞ւ երկրի  
Խոր ձորերի  
Առոթ ափերին անզուման,  
Իմ արկին  
Կյանքիս հովին  
Հողմն է ծեծում՝ վա՞խ ամա՞ն...  
4

—Քնքուշ հովեր,  
Զմբո՞ւմս դետեր,  
Ճամփա տվեք՝ թող տո՛մ գա,  
Սիրուց անհագ,  
Մարա՞վ պապակ  
Զահել-ջիվա՞ն յարս գա:  
Հե՞յ չան է չան  
Լանջեր մարջան,  
Մատադ լինի հոգիս ձեզ,  
Ինձ էլ տարեք  
Զեր գիրկն առեք,  
Սով գարդե՞րս պատմիմ ձեզ:

1915.

## ՕՐՀՆՎԱԾ ԼԻՆԻ

Օրհնված լինի այն ուղին պայծառ,  
Որով դու մի օր ժպտացիր, անցար...  
Այն զինջ, զյութական վայրկանները վառ  
Որպես սիրո հուշ—կմնան անմար...  
Աշերիդ փայլը արցոնքով ցողված—  
Կախարդել է ինձ, իմ հուզ, իմ աստված...  
Եվ ես օրն ի բուն, քնած, թե արթուն.  
Կաղոթեմ անվերջ քո ծաղիկ սիրուցն  
Որ դու, իմ անգին, ետ դառնաս կրկին,  
Գուրպուրես, շոյե՞ս իմ մատաղ հոգին...  
Օրհնված լինի այն ուղին պայծառ,  
Որով դու մի օր ժպտացի՛ր, անցար...

1515.

\*\*\*

Բեր կույս հոգուս  
Զինջ արշալույս  
Խնկաբույր.  
Վարդ արենե՞ր,  
Ժպտուն հուլսեր  
Ու համբույր...  
Բեր վառվուն  
Ոսկի գարուն  
Իմ կյանքին.  
Նուրբ ծաղիկներ,  
Երգ ու տաղեր  
Երկնային...  
Մոռացիր ցալ.  
Ինչ որ անցավ  
Թող անցնի.  
Լաց, վհատում,  
Լուս խավարում  
Թող մարի:  
Ես քեզ կրկին  
Իմ շերմ կրծքին  
Կսեղմեմ.  
Մրտիդ վերքը  
Քնքուշ սիրով  
Կամոքեմ...  
Միայն դու ինձ,  
Ա՛խ, էլ ոչի՞նչ  
Զպտումհս.

Վշտի՞ց, թախծի՞ց,  
Արցունքների՞ց  
Չխոսես:  
Միշտ կույս հոգում  
Բեր արշալուս  
Խնկաբուցր,  
Վարդ արևնե՞ր,  
Ժպտուն հույսեր  
Ու համբուցր:

1915.

Ս Ո Ս Ի Ն

Պատուհանիս տակ սոսին երկնամբարձ,  
Մեղմիկ սոսափում, երգում է կամաց:  
Ես այդ երգի մեջ քո երգն եմ լսում,  
Միշտ նա՛ է հնչում իմ սիրող սրտում:  
Ուզում եմ հանկարծ, հանկարծ գրկել քեզ,  
Բայց դու հեռո՞ւ ես, հեռու ու անտես:  
Հուզվում է հոգիս, հուզվում ու լալիս,  
Ծորթերս դողդո՞՞՝ անո՛ւնդ են տալիս:  
Նայում եմ երկար, նայում քո ճամփին,  
Դու չե՛ս երկում, դու չկաս կրկին:  
Թափվում են անվերջ, թափվում շիթ առ շիթ,  
Գիշեր աշերս արցոնքներս վճիտ:  
Եվ սոսի՛ն, սոսի՛ն երկնամբարձ,  
Պատուհանիս տակ երգում է կամաց:  
Ո՞վ գիտե, գուցե իր ցա՛վն է երգում.  
Ես չեմ հասկանում... քո ե՞րգն եմ լսում:

1917.

\*\*\*

Հովիկ դարձա  
Եկա անցա  
Քո պարտեկով քնքշանալ՝  
Համբուրեցի',  
Գուրգուրեցի  
Ծաղիկներդ նո՞ւրը ու խաս...  
Քո աշքերի  
Գոհարների  
Շիթերը ինձ՝ ժպտացին.  
Քո շուրջերի  
Համբույրների  
Արեներն ինձ զրկեցին...  
Ջանգակ ձա՛յնդ,  
Անուշ կա՛նչդ  
Թհիս առած ա՛նց կացա.  
Հեղիկ նազով,  
Սիրո սազով  
Սիրտդ առած՝ ե՛տ դարձա...

1925.



Հազա՞ր ու մի պիշերների  
Հեքիաթներից էլ սիրուն,  
Ջրնգո՞ւմ են իմ երդերի  
Առուները վարարուն...»

Շեխեր Զազեն ի՞նչ է իմ գեմ,  
Որ սրտիս հո՞ւրն ունենա.  
Ես աստղերի լեզուն դիտեմ—  
Արևն ինձ հե՞տ է հիմա:

1928.

ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Լուսը բացվեց գնամ Հանդը,  
Կանաչել են սարն ու արտը.  
Կոլխոզի արտ հերկող տղան—  
Ի՞նձ է կանչում, մեռնեմ նրան:

Արևի հետ զարթնել է նա,  
Զնդպնդում է երգը նրա,  
Էն տրակտոր քշող տղան—  
Զա՞ն, իմ յարն է, մեռնեմ նրան:

Դոշին բացված կակաչ ունի,  
Անուշ ու վառ խոսքեր ունի,  
Էն կոմոմոլ ջաճել տղան—  
Ճենց իմ յարն է, մեռնեմ նրան:

Լուսը բացվեց գնամ Հանդը,  
Կանաչել են սարն ու արտը.  
Կոլխոզի արտ հերկող տղան—  
Ի՞նձ է կանչում, մեռնեմ նրան:

Էն, տրակտոր քշող տղան,  
Զա՞ն, իմ յարն է, մեռնեմ նրան...

### ԱՅՍ ԳԱՐԵԱՆ

Այս գարնան շաղերով դու արի,  
հաղերով, տաղերով դու արի,  
Դյուցազուն քաջի պէս հաղթական,—  
Քո ալ ձին խաղալով դու արի:

Աղբյուրից քեզ պաղ ջուր կրերեմ,  
Սարերից ծաղկի բուլը կբերեմ,  
Այդ հպարտ ճակատդ պսակող—  
Արևից վառ համբուլը կրերեմ:

Արծվալին հայացքիդ եմ կարոտ,  
Թովչական կանչերիդ եմ կարոտ.  
Մեր երկու սահմանները հսկող—  
Ծովից խոր աշքերիդ եմ կարոտ:

Այս գարնան շաղերով դու արի,  
հաղերով, տաղերով դու արի,  
Դյուցազուն քաջի պէս հաղթական,—  
Քո ալ ձին խաղալով դու արի:

Գ Ի Բ Կ Ս

Թե որ պիրկս բացեմ քո դեմ,  
Կիւննթանաս բուրմոնքից,  
Դու չես տեսել այդպես եղեմ  
Հյուսված ծիլ ու ծաղկոնքից:

Հեքիաթախոս աղբյուրների  
Զուրն այդտեղից է բխում,  
Սիրո չքնաղ արևների  
Հուրն այդտեղից է բխում...

Ալեծածան ծովերն անգամ  
Չունեն հուզանքը սրտիս,  
Արևածին ու անթառամ  
Սիրո երգն է միշտ շրբիս:

1935.



Ոսկեղեն գալաթն իմ լի գինի,  
Յար իմ, քե՛զ-քեղ եմ ես անրջում.  
Շուրթերիս վառ համբույրն եղեմի—  
Յար իմ, քեղ-քե՛զ եմ ես անրջում...

Բաց գիրկս ալ գարուն քո դիմաց,  
Քո գալուն, ժպտալուն եմ կարոտ.  
Սիրաբոյր ծաղիկնե՞րն իմ փնջած,  
Քո գալուն, ժպտալուն եմ կարոտ...

Սև գիշեր աչքերն իմ հմայիւ,  
Լի արցունք—քո ճամփին եմ հառել.  
Հույսերն իմ լուսեղե՞ն ու անբիծ—  
Քո սիրո կրակո՛վն եմ վառել...

Բաց գիրկս ալ գարուն քո դիմաց,  
Ոսկեղեն գալաթն իմ լի գինի.  
Յար իմ, քեղ-քե՛զ եմ ես անրջում...

Սիրաբոյր ծաղիկներն իմ փնջած,  
Շուրթերիս վառ համբույրն եղեմի—  
Յար իմ, քեղ-քե՛զ եմ ես անրջում...

1942.

Գ Ի Տ Ե Մ

Գիտեմ, դու ամեն-ամեն իրիկուն  
Երբ վերջալույսն է մարում լեռներում.  
Հիշում ես մեր տունն ու այզին ծաղկում,  
Խոխոցուն առո՞ւն դալար թփերում,  
Որի ջրերում այն արծաթ կոհակ—  
Թողել ենք մեր զինջ հայացքնե՞րն հստակ...  
Հիշում ես մանկանն իմ՝ այնքան սիրուն—  
Մաղկահյուս ճոճկում, բարդիների տակ...  
Ու կարտում ես մանուշակագույն  
Աչքերին պայծառ, շուրթերին սուտակ:  
Ուզում ես, որ նա քո գրկում լինի,  
Զերմ համբուլը քաղես թմբլիկ թաթերից,  
Լսես գեղգեղանքն այնքան թուշալի—  
Անուշ ծիծաղը վառ ու կենսալից:  
Գնդակների տակ, ա՞ել մարտերում,  
Գիտեմ, դու ամեն, ամեն ակնթարթ  
Անհո՞ւն կարոտով մեր տունն ես հիշում—  
Ինձ ու իմ մանկան՝ աչքերով զվարթ:

1943.



Կուռ ու հանդարտիկ գիշեր է խորին,  
Գիշեր է խորին ու հեքիաթային,  
Մանկիկս է քնել խաս օրորոցում,  
Հանց քնքուշ շուշան՝ դարնան ծաղկոցում:

Երազ կապույտից աստղերն են ժպտում,  
Կարոտիդ վարդն է փթթում իմ սրտում.  
Կրակն օջախում բոցկտում է գեռ—  
Քեզ եմ սպասում օ՛, իմ անվեհեր:

Թվում է պիտ գաս, պիտ գաս հիմա տում,  
Ռազմի հանդերձով, ուրախ ու խնդում.  
Գաս, գրկես թե ինձ, և թե իմ մանկան,  
Որը քեզ այնքա՞ն-այնքա՞ն է նման:

Թվում է հիմա պիտ կանգնես շեմքին,  
Ամեն օրվա պես ուրախ, ժպտագին,  
Ծուրթիդ քաղցր ե՛րգն իմ ժողովրդի,  
Հոգուդ մեջ սերեր, կարուներ հութի:

1943.



Դարունը հագել ծաղկանկար շորեր,  
կապել խաս գոտի  
Քեզ է սպասում, դյուշազում քաջի՛դ  
արև աշքերով,  
Կյանքը բացել է սուփռան բարիքով—  
ժպիտը շուրթին  
Հերսոի մոր պես քե՛զ է սպասում—  
սիրոց լի սիրով:

1945.



Թո չնաշխարհիկ պատկերն եմ հյուսել սրտիս կտավին  
Ու քեզ եմ մնում քո ճամփին հառած աշքերով ծավի.  
Ամեն օր մի նոր ակոս է փորվում դեմքիս մարմարին.  
Կարոտիդ արտում ես հավքի նման կանչում եմ «արի»:  
Արշալույսների վարդերը քնքուշ՝ շուրթերդ են բացում,  
Այդ վարդերի մեջ սիրտս է ալավում քո սիրով լիցում.  
Ես այդ վարդերի բույրով եմ արբում ոսկի անրջում.  
Արի ի՞մ Դավիթ, քեզ խոր կարոտած եսնդութիւն է կանչում:

1945.

## ԵՏ ԴԱՐՁԱՐ

Ետ դարձար կովից, ու մենք ժպտադեմ.

Շրջում ենք ահա մեր հին պուրակում,

Ուր կռունկի աշք աղբյուրն է երգում,

Ու գրկել են մեզ ծաղկունք գեղադեմ:

Մեզ վաղուց ծանոթ թիկերն են շրջում,

Հողին է շնկանկում անուշ ու մեղուշ.

Մանկությունը մեր նորից ենք հիշում,

Նորից ենք ապրում կյանքով քաղցրանուշ.

Քայլում ենք դալար հանդերի հեռում,

Լսում երգերը մեր հայրենական,

Լսում ոգեթով նվազներ որքան,

Խինդով է լցվում մեր սիրտը դարում:

1945.

## ՀՅՈՒԹ ԷՒ ԱՅՍՈՐ

Հյուր էի այսօր ծաղիկների մոտ,  
Երկար նստեցի քաղցր զրուցի,  
Չանձրույթ չէր զգում հոգիս երազկուս,—  
Երկար նստեցի քաղցր զրուցի:  
Ծուշան ու հասմիկ, վարդը քնքշաբույր,  
Գրկել էին ինձ. գուրգուրում էին  
Սիրտս սիրատանջ, ու տալիս համբույր—  
Պապակ շուրթերիս, աշքերիս մթին...  
Ժամանակն այնպիս արագ էր սահում,  
Այնպիս թեթև էր սվավում քամին.  
Ինձ զգում էի իմ հայրենիքում,  
Տեռո՞ւ, հեռավոր Արաքսի ափին:  
Հյուր է՛ի այսօր ծաղիկների մոտ,  
Երկար նստեցի քաղցր զրուցի,  
Կարծես ամեն ինչ հին էր ու ծանոթ—  
Երկա՞ր նստեցի քաղցր զրուցի:

1916.

## ԳԻՇԵՐԻՆ

Գիշեր է խորին... նստել եմ ահա բաց պատուհանին  
Լուսնի արծաթյա շողերը գրկած մենակ ու խոհուն.  
Զեփյուռն է շոյում վարսերս գանգուր, դեմքս հմայուն,  
Քո ե՛րգն եմ լսում նոճիների տակ խոր—կես գիշերին...  
Թվում է աստղերն հենց քո աշքե՛րն են ժպտում սիրաբար  
Ու ինձ փայփայում քնքշանքով հազար, հազա՞ր նազանքով...  
Զարթնում են որքա՞ն ու որքա՞ն հուշեր դյութական ու վառ,  
Սովերներ աղո՛տ, որ սահում են լո՞ւ աստղերի ցոլքով:

1917.

## ԿԱՐՈՏԵԼ ԵՄ ԵՍ

Մեր Զահուկ գյուղի ծաղկուն լեռներին  
Քնքուշ հովերին, զնդուն դետերին  
Թավշապատ ու զոլ ձիգ ճամփաներին,  
Ոլորապտուց խոր-խոր ձորերին,  
Բար իմ մանկության օրերն եմ մաշել,  
Թիթեռների հետ թիթեռ եմ դարձել  
Թփից-թուփի անցել ժպտացել՝, լացե՛լ,  
Սիրաս ոսկեվառ հուշերով նախշել,—  
Կարոտե՛լ եմ ես...

Հողե ու ցածրիկ մեր հին տնակին,  
Դալար ուռենուն՝ թեքված գետափին,  
Ա'լեհեր տատիս նստած շվաքին  
Չեռներս՝ ծոցում, գլուխս՝ կրծքին,  
Նրա ինձ պատմած բյո՛ւր հեքիաթներին,  
Այն կախարդական առասպելներին,  
Իր գերո՛ւմ էին իմ մանուկ հոգին,—  
Կարոտե՛լ եմ ես...

Դեղձենիների հյուղքերին թառած  
Սիծեռնակներին իմ այնքա՞ն սիրած,  
Աղավնիներին այն մեսաքսաթե,  
Որ պարո՛ւմ էին հովի դեմ թեթև,—  
Կարոտե՛լ եմ ես...

Մեր բակից հոսող կապուտաշ առվին,  
Արթ ջրերում կիզիչ արևին  
Բոբիկ ոտներով վեր-վե՛ր եմ ցատկել,  
Ավագից մանրիկ քարե՛ր եմ հանել,—  
Կարոտե՛լ եմ ես...

Եղեգնուս ու խիտ ճահճուտում այն թաց  
Արագիլներին մի ոտքի կանգնած,  
Որոնք ինքնագոհ ժպտում էին միշտ  
Նրազներ հյուսով կապույտին ու ինձ,  
Որոնք շատ անդամ իմ հուշքն են խլել,  
Թաթերս պարզել ուզել եմ բռնել,  
Թռել են թառել մեր խռախ գեղին  
Այնտեղից էլ վեր հեռո՞ւն անմեկին—  
Կարոտել եմ ես...  
Իմ խաղընկերներ սիրուն թամուշին,  
Շուշանից ճերմակ քնքուց Անուշին,  
Արշալույսներին այն ցողաշաղախ,  
Վերջալույսներին այն գեղածիծաղ.  
Պարզ գիշերներին այն աստղաճաճան,  
Քարվաններին այն քաղցրազողանց  
Կարոտել եմ ես...  
Իմ ծաղիկներին այն հաղարերանդ,  
Գալար թփերին այն լուսապսակ,  
Իմ թիթեռներին նազանի ու նուրբ,  
Մորս աշքերին մանուշակի թուփ,  
Զերմ համբուլներին հարա՛զատ ու սուրբ,—  
Կարոտել եմ ես...  
Մեր Զահուկ վյուղի հովին ու ջրին,  
Հորս քաղցրաճայն հոռովելներին,  
Երկնքով թռչող զմրուխտ հավքերին,  
Հովին ու զովին, արեգակներին,  
Հայրենի իմ տան ամեն մի քարին  
Կարոտել եմ ես ...  
Կարոտել եմ ես ...

## ԳԱՐԵՍԱՆ ԱՌԱՎՈՅՑ

Ամեն առավոտ պարտեղ եմ մտնում,  
Ծաղիկների հետ մեղմիկ զրուցում.  
Կարմիր ու ծիծուն վարդը իր թփից  
Քնքորեն ժպառում—ողջունում է ինձ...

Եղաբշ եմ փոռում մախմուռ կանաչին,  
Նստում, ունկ գնում առվի կարկաչին.  
Շուրջու թուլական հովն է շնկշնկում,—  
Սոխակն է երգում դալարի գրկում...

Արևն իր շողբն իմ սբուից է առնում,  
Լույսերը վառում կյանքի մեջյանում,  
Իմ սիրաբողբոշ քնքուշ հույզերով  
Աշխարհն է արբում՝ մի ծով վայրկյանով:

Ամեն առավոտ պարտեղ եմ մտնում,  
Ծաղիկների հետ մեղմիկ զրուցում.  
Ու հս էլ կասես դառնում եմ հեքիաթ,  
Հեքիաթ ծաղկունքի գրկում անարատ:

1921.

## ԳԱՐԵԱՆ ԵՐԳԵԲԻՑ

Փիրուզյա Հեռուն, իշել է գարուն,  
Արծա՛թ է հագել, խոխոջուն առուն.

Մախմուր կանաչի, գրկում երաղկուտ,  
Թիթեռն է պարում, թևերը շաղոտ...

Փբել է կարմիր վարդը իր թփին,  
Թուշը դեմ արել, արևի շուրթին...

Համեստ հարսի պես, շուշան հողի տակ  
Ծառերը ծաղկել, ժպտում են հստակ...  
...Ամեն ծիլ ծաղիկ մեր կյանքի համար,  
Մի նո՞ր արբեցման հուշեր են անմար...  
Խինդ ու ծիծաղ է ամեն պուրակում  
Աշխարհի գրկում, մեր սիրոն է երգում...  
Արծաթ է հագել, խոխոջուն առուն,  
Գարո՞ն է իշել, փիրուզյա հեռուն,...

1925.

## ՀՈՎՃԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Դարունին էր այդ... այն ծաղկածիծաղ  
 Սալորենու տակ, իրիկնամուտին,  
 Եղբ կապուտացա երկի'նքը խաղաղ  
 Իր զիրկն էր բացել լիճ ու կարապին...  
 Քեզ հանդիպեցի, սիրելի՛ պոետ,—  
 Թևանցով արած քո Անուշի հետ:  
 Նստեցինք լի փիրուզյա ափին,  
 Այն նարնջագույն վերջալույսի դեմ,  
 Զուրն ափին մեղմիկ տալիս էր լափին,  
 Աշխա՛րճն էր թվում մի չքնաղ եղեմ...  
 Տավիդն էր հնչում քնքշանքով այնքա՞ն,  
 Հովն էր շնկնկում մե՛զմ ու դյութական:  
 Անհոն հրճմանքով սիրով հայրական  
 Ժպտացիր դու ինձ քո ժպտով զվարթ,  
 Թէ առավ հոգիս, հոգիս կուսական.—  
 Դու ինձ թվացիր այնպե՛ս հարազատ:  
 Լսեցի քո չե՛րմ ու սիրագորով  
 Ջրուցների զիրքն այնքան իմաստուն,  
 Սիրոս բաբախեց խորոնկ հույզերով,—  
 Վարդե՛ր բացեցին շուրթերիս դժույն:  
 Ու պայծառացավ իմ միտքը այնպես,  
 Կայծե՛ր ցայտեցին զիշեր աշքերես:  
 Դեռ մինչ այսօր էլ ինչպես մի նվազ  
 Խոսքերդ են հնչո՛ւմ իմ ականջի տակ,—  
 — Թափանցիր դու միշտ ժողովորդների  
 Կորոնկ, ուկերառ զիրկը պատմության.

Այնտեղ կգտնես կաթն աղբյուրների  
Ակները վճի՛տ մհծ իմաստության:  
Այնտեղից քաղիր դու քո մտքերի  
Ծաղիկները վառ ու հավերժական.  
Այնտեղից ըմպիր ջուրն անմահների  
Ուկե գավաթո՛վ մի անապական:—  
Օ՛, մհծը պոեա ժողովրդասեր,  
Քեզ չի' մոռանա սանուժիդ երբեք,  
Թեկուզ գան, անցնեն դարե՛ր ու դարեր:  
Դու կապրես հավետ որպես անմահ երգ  
Ամենքիս սրտում, աշխարհի՛ սրտում  
Հանց հավերժական խոր իմաստություն:

1933.

\*\*\*

Երբ ամեն անդամ գարունն է ծաղկում,  
Սիրտս գարնան հետ ծաղկում է նորից,  
Որքան հուշեր կան զարունի գրկում.  
Հուշեր սիրաբույր, հուշեր կենսալից...  
Երբ ամեն անդամ գարունն է ծաղկում,  
Սիրտս գարնան հետ ծաղկում է նորից:

1935.

## ԲԱՆԱՍՏԵՂՄԻ ՍԻՐՏԸ

Մի արևոտ,  
Զով առավոտ,  
Աչքերն հառած լճակին,  
Նստեց խոճուն  
Ու երազուն  
Բանաստեղծը տենչագին:  
Հազար դարով,  
Սիրով սիրով  
Ծաղիկ սիրով վարարուն,  
Երդեց մեղմիկ  
Չայնով գողտրիկ—  
Քաղցրադաշտայլ ու վառուն...  
Այդ մուշ անուշ  
Երդը քնքուշ—  
Թափանցեց սիրով վարդի.  
Վարդը շիկնեց.  
Վարդը հուզվեց  
Ու շուրթերով նաբաթի  
Մեղմ շշնչաց.  
— Այս երդն անանց,  
Բուռն է, թեժ է այն երդից,  
Որն անդադար  
Ու դարեղար  
Լսում եմ իմ սոխակից...  
Ո՞վ է—ասաց—  
Իմ երազած  
Սոխակից վեհ գեղգեղում.

Քար ու քարափ  
Աշխարհ անափ.  
Սիրո երգով ողողում:  
Ժպտաց բարդին  
Սիրուն վարդին,—  
Ասաց նրան քաղցրածալն,—  
— Հուր հրածին  
Բանաստեղծի  
Սիրոն է եռում, ոնց հնձան...  
Նրա սրտից  
Ծլած թիից  
Ծիլ ես առել դու մի օր.  
Իմաստումի  
Արևն ունի—  
Եր աշքերում լուսավոր:  
Թափանցում է  
Կյանքի բոլոր  
Ակունքները խորախոր.  
Կարդում նրան,  
Խորհում նրա  
Խորհում խոհերը ամեն օր...  
Քո սոխակի  
Անուշ երգի  
Հնչունները դյութական  
Նրա շուրթերով  
Քեզ են հասնում—  
Գեղգեղումով թովչական...  
Բանաստեղծի  
Սիրոն է արև—

Արեի պես մշտավառ.  
Հազար դարով  
Վասիած սիրով—  
Ճամփում է լուս ու խափար...  
Հզոր է նա,  
Բանաստեղծը  
Զգացումով վառ կյանքի,  
Նրա հոգում  
Հուրն է վառվում—  
Սիրո հուրը արեգի:—  
Ասաց բարդին  
Քնքուշ վարդին  
Աւ շնորհնեց հովն անուշ,  
Հնչեց նորից  
Երգը թովիւ—  
Երգը վառուն ու լի հուշ:

1936.

## ԻՄ ՊԱՐԱ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Գետափին խարխուլ մեր տնակը հին,  
Ծեր փշատենին թեքված գետափին.  
Արծաթահեր տատը իմ կորաքամակ,  
Ճախարակի մոտ, աղոտ լույսի տակ...  
Սրտամաշ, դեղին լապտերների պես  
Աչքե՞րը նրա՝ դեռ հիշո՞ւմ եմ ես...

Օրտեղ մի սիրուն ծաղիկ եմ տեսել,  
Նիշար մատներով վզնոց եմ հյուսել.  
Թիթեռների հետ դարձել եմ թիթեռ  
Ու տեսել որքա՞ն ալ-արյուն վարդեր...  
Դեմքով՝ վշտահար, հոգով՝ վառվուն,—  
Տենչացե՞լ եմ միշտ ծաղիկ ու դարուն:

Արկի շողքին ձեռներս պարզել  
Ու շերմություն եմ նրանից հայցել...  
Ավա՞զ, դալկահար սիրտս մանկական,—  
Եր գիրկն է տռել դեղին լուսնկան...  
Կարոտել եմ միշտ արկի շողին  
Բայց դառել գերի խալարի խաղին:

Օ՛, իմ մանկություն, զու տերև աշնան,  
Որ կոխոտվել ես ճամփեքում այնքան...  
Ինչպես էակ մի զգայուն, բայց լուռ,  
Կրել հալածանք, թախիծ ու մրմուռ...  
Եղել խաղալիք կարիքի ձեռքին,  
Օրեր ես ճամփել զու միշտ լալազին...

Իմ պաղպան մանկություն, երաղը իմ վաղանց,  
Դու իմ հեղ ծաղիկ՝ այնքան տառապած...  
Անցյալի տիմո՞ւր ու գորշ մշուշում  
Իմ տերեւաթափ դարսնն եմ հիշում...

1938.

ՎԱՐՊԵՏԻՆ

Ա՞յս երանի հով լինեի  
Ալագյաղի փեշերին,  
Ծաղիկների ծով լինեի  
Ախուզյանի ափերին,  
Ուկեփետով հա՛վք լինեի  
Ու իշնեի քո կարին.  
Իմ թևերով հով անեի  
Քեզ՝ քո հոգնա՛ծ ժամերին:

1940.



Յող դարերը գան ու անցնեն նորից,  
Զի մարի երբեք Հուրը արևի,  
Զի' անցնի երգը մարդու շուրթերից—  
Մարդու սիրտն է միշտ սիրո ծարավի:

1940.



Պարզ հայացքով նայիր կյանքին  
Ու աշխաբհին այս անծալը,  
Գիրկդ բացիր արեգակին,—  
Անմահությանն այդ անմար:

1940.

\*\*\*

Անմահությունը իր սակի գրքում  
Մի նոր էջ գրեց  
Աստղերի ցոլքով.  
Մի նոր պատմություն մեր կյանքի մասին—  
Քնքո՞ւզ զարդարվեց  
Գոհար ակոմքով:

1945.



ԲՈՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

1. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԳՆԵՐ

	<i>k2</i>
Սիրեցի	3
Իրիկվա միգում	4
Ինչպես արդյուքը վճիռ ու կայտառ	5
Վասինք ջաները	6
Ողջույն ձեզ	7
Չեմ այցելի	8
Հայրենիքին	9
Արցունը	10
Երազի պիս	11
Իմ ժողովրդի արցունքից ծնված	12
Գաղթը	13
Տառապյալ քույրերին	14
Կդա մի օր	15
Այս օրերում	16
Հոգեբան	17
Աքոր	19
Հայրենիքի ձայնը	20
Ընկերուս	21
Գեռ պհոք է լինի	22
Ամեն մի զրկված տեղ ունի ինձ մոտ	24
Մաղիկներ	25
Հեղաշամբույր ծաղիկների թերթերում	26
Մայիսի մեկը	27
Մեսնիմ հետավոր այն հողաթումբին	29
Ես դեռ նոր և՛ աշխարհ գալիս	30
Հոգուս պարտեզում արևն է ժպտում	31
Մզանության երգերից	32
Էլ մբրիկ շկա	33
Հոգիս	34
Մենք	35

Թշվառն	կրեկվա	36	
Հեռու-մոտիկ	իմ	քույրեր	38
Թրբուհի	քույրեր	40	
Սպանացի	մայրերին	41	

## 2. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Անի	43	
Ճախարակ	44	
Գյուղում	45	
Դագգահի	աղջիկ	46
Արտերը	48	
Արել հագել է ոսկի	49	
Տոմբը	50	
Նալաստի	52	
Մոր ուղերձը	54	
Սովետական քաղաքացի	55	
Առաջնորդին	56	
Ստալինյան բազեներին	57	
Հայրենիք	59	
Յանուար	60	
Հնչի՛ր, իմ քնար	61	
Նրան եմ երգում	63	
Ուկրաինացի պարտիզանուհին	64	
Կորդար	66	
Գթության քույրը	67	
Աղբքաջան	68	
Վերադարձի հույզեր	70	
Բարի գալուստ	71	
Ամառ	72	
Մոսկվա	74	
Օլդա	76	

## 3. ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈՒՅԶԵՐ

Օբոր	78
Երազ մանուկս	79
Ես մայր եմ դառել	80
Սպասում	81
Պարուրում եմ քեզ	82
Նոր է բացվել	83

	k <sub>2</sub>
Անուշ բալիկ	84
Աղջիկ ունեմ	86
Իմ փոքրիկ աղջիկ	87
Չի ես քշում	88
Երբ չես լինում	89
Մոր սրտի պես	90
Իմ մայրն էլ	91
Նոր օրոր	92
Երեք լաւա	93
Դուք այնպես լավն էք	94
Բուրաստանն իմ	95
Հոկտեմբերիկ իմ բալիկ	96
Զարթնիր քնից	97
Իմ երեխան	98
Իմ հայելին	99
Սիրում իմ	100
Չինար հասակով	101
Այն դալար ուսին	102
Մայրը	103
Ինչ որ անմահ է ու հավերժական	104
Փառք քեզ, դարձն	105

#### 4. ՍԵՐԵԲ, ԿԱՐՈՑՆԵՐ


Լանջեր մարջան	106
Օրհնված լինի	108
Բեր կույս հոգուս	109
Սոսին	111
Հովիկ դարձա	112
Հաղա՛ր ու մի գիշերների	113
Գեղջկուճու երգը	114
Այս դարնան	115
Գիրկո	116
Ոսկեղեն դավաթն իմ լի գինի	117
Գիտեմ	118
Լուռ ու հանդարտիկ գիշեր է խորին	119
Գարունը հագել է ծաղկանկար շորեր	120
Թո չնաշխարհիկ պատկերն իմ հյուսել	121
Ետ դարձար	122
Հյուր էի այսօր	123
Գիշերին	124

Կարոտել եմ ես	125
Դարնան առաջոտ	127
Դարնան երգերից	128
Հովհաննես Թումանյանին	129
Երբ ամեն անգամ	131
Բանաստեղծի սիրտը	132
Էմ պաղ մանկություն	135
Վարպետին	137
Թող դարեր գան ու անցնեն նորից	138
Պարզ հայացքով նայիր կյանքին	139
Անմահությունն իր ոսկի գրքում	140

Պատ. Խմբագիր Խ. ՊՈՂՈՍՅԱՆ  
 Տեխ. Խմբագիր Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ  
 Սրբագրիչ Մ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎՃ 01076: Պատվիր 167: Տիրաժ 3000:  
 Տպագր. Զ մամուլ, հեղ. 4 մամուլ:  
 Հանձնված է արտադր. 21/IV 1948 թ.  
Ստորագրվ. է տպ. 20/VI 1948 թ.

ՀՍՍՌ Մ. Սովետին կից  
 Պոլիգր. և Հրատ. Վարչ.  
 № 3 ապարան, Ալա-  
 վերդյան, № 65,  
 Երևան, 1948 թ.







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220026707

ԳՐԱԾ 10 Ա.

